

74-75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ ՊԵՏՐՈՍԻ

ՄԻՐԶԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ «ԹԱՐԻԽ-Ե ՄԱՖԻ»
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐ ՈՐՊԵՍ ՂԱՐԱԲԱԴԻ XVIII-XIX ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ

Է.00.05 ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԴՐՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՄՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂԱՍԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 1999

Ատենախոսության բեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Դ. ՓԱՓԱՉՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու
Պ. Ա. ԶՈՐԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

Պաշտպանությունը կայանալու է

"23" նոյեմբերի 1999թ. ժամը 14 օո:ին

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 006 Մասնագիտական Խորհրդում (հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղդասյան պող. 24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է "23" հոկտեմբերի 1999թ.

Մասնագիտական Խորհրդի գիտական քարտուղար, պ. գ. դ.

Ա. Վ. ԲՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արցախահայության 1988թ. սկսած ազգային ազատագրական պայքարի պատճառները գալիս են դարերի խորքից: Ներկայումս, երբ շարունակվում է անզիջում քաղաքական պայքարը դիվանագիտական ատյաններում, առանձին կարևորություն են ստացել այդ պայքարի արդարացիությունը հիմնավորող պատմագիտական փաստերը: ՈՒստի նման փաստերի վերհանումն ու գիտական շրջանառության մեջ դնելը մեր ժամանակի արդիական խնդիրներից է. որի լուծման համար անհրաժեշտ է Արցախի պատմության ոչ միայն հին, այլև նոր (XVIII-XIX դարեր) շրջանների սկզբնաղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը:

Ղարաբաղի XVIII-XIX դարերի քաղաքական ու տնտեսական կյանքում տեղի ունեցած վճռական փոփոխություններ, որոնք իրենց դրոշմը բողեցին արցախահայության հետագա շրջանի պատմության ընթացքի վրա: Այս և անգամ ավելի վաղ շրջանից են գալիս ներկայումս նրա շուրջ ստեղծված կոնֆլիկտն ու բարդ իրադրությունը:

Ղարաբաղի այդ շրջանի պատմությունն աչքի է ընկնում սկզբնաղբյուրների առատությամբ, որոնց մեջ մեծ խումբ են կազմում տեղի հայ ու մահմեդական պատմագիրների երկերը: Պատմական աշխատությունների այդ խմբում առանձնահատուկ տեղ է գրավում հայազգի Սիրզա Յուսուֆ Ներսեսուվի «Թարիխ-ե Սաֆի» (պրակ. - «Շչմարտացի պատմություն») պատմագրական երկը, որը մինչև վերջերս անծանոթ էր գիտական լայն շրջանակներին, թեև նրա առանձին տեղեկություններ օգտագործվել են որոշ աղբյուրներից գիտնականների կողմից¹: «Թարիխ-ե Սաֆի» երկի, որպես Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության արժեքավոր սկզբնաղբյուրի հակիրճ նկարագրությանն են նվիրված պրոֆ. Հ. Դ. Փափազյանի և Ա. Ն. Գուլիևի հոդվածները հոդվածում արված է երկի ընդհանուր բնութագրությունը²:

Սիրզա Յուսուֆ Ներսեսուվի պարսկերենով գրված երկը նոր ու արժեքավոր փաստեր է հաղորդում XVIII-XIX դարերի Ղարաբաղի հայ մելիքությունների, մահմեդական խանության ու դարասկզբի ռուս-պարսկական պատերազմների պատմության վերաբերյալ: Դրանց հիման վրա լրացումներ ու ճշգրտումներ են կատարվում հիշյալ ժամանակահատվածում Ղարաբաղում զարգացող առանձին քաղաքական դեպքերի ու իրողությունների պատմության մեջ:

Պատմագրական երկի որոշ հաղորդումներ ունեն արդի քաղաքական հնչեղություն: Մասնավորապես, նրա տեղեկությունները Խամսայի մելիքությունների տարածքների վերաբերյալ, օգնում են ճշգրտելու XVIII-XIX դարերի արցախահայության բնակության շրջանները, որոնց մեծ մասը խորհրդայնացման շրջանում դուրս մնալով ԼՂԻՄ-ի տարածքից հետագայում հայազրկվել են:

Սկզբնաղբյուրում արժեքավոր տեղեկություններ կան հայ մելիքների ու հասարակ ժողովրդի՝ մահմեդական խաների դեմ մղած համառ պայքարի վերաբերյալ, որոնք պարունակում են հետաքրքրական մանրամասներ ու նոր տվյալներ:

Ներսեսուվը եզակի վկայություններ է տալիս Ղարաբաղի մահմեդական խանության XVIII դարի վերջի քաղաքական պատմության որոշ հարցերի շուրջ: Նա կարևոր

¹ История Азербайджана, т. 2, Баку 1960, с. 936; Г. Абдуллаев, Азербайджан в 18-ом веке и его взаимоотношения Россией, Баку 1965, с. 41.

² Հ. Դ. Փափազյան, Սիրզա Յուսուֆ Ներսեսուվի «Թարիխ-ե Սաֆի»-ն որպես Արցախի XVIII-XIX դարերի պատմության սկզբնաղբյուր, Իրանում, Երևան 1994թ., № 2, էջ 23-25 և Ա. Ն. Գուլիև, Две хроники XIX в. по истории Азербайджана, с. 163-169.

մանրամասներ է հաղորդում հարևան խանությունների նկատմամբ Ղարաբաղի Իբրահիմ խանի (1762-1806թթ.) կատարած ռազմական ձեռնարկումների վերաբերյալ:

«Թարիխ-ե Սաֆի»-ի պատմագիտական բարձր արժեք ունեցող հատվածներից է Շուշի քաղաքի պատմությանը նվիրված հակիրճ ակնարկը: Այստեղ հեղինակը մանրամասն կանգ է առնում նրա հիմնադրման, կառուցման ու վերակառուցման պատմության վրա՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդելով քաղաքի քաղամասերի ու բնակչության կազմի փոփոխությունների մասին:

«Թարիխ-ե Սաֆի»-ի վերոհիշյալ գլուխը նոր մանրամասներով է հարստացնում Իրանի շահ Աղա Մոհամմադ խանի Ղարաբաղ կատարած արշավանքների (1795թ և 1797թ) պատմությունը:

Հեղինակը իր երկում քննարձակ տեղ է հատկացրել Ռուսաստանի դեպի Անդրկովկաս ներքափանցման պատմությանը: Նա հավաստի տեղեկություններ է հաղորդում XIX դարի սկզբին Ղարաբաղում ու հարևան շրջաններում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների վերաբերյալ որոնք օգնում են ճշգրտումներ ու կարևոր լրացումներ կատարել այդ շրջանի պատմության մեջ: Հեղինակի անաչառ վերաբերմունքը ռազմական իրադարձություններին բարձրացնում է նրա հաղորդումների պատմագիտական արժեքը իրանական պալատական պատմագրության համեմատությամբ, որը թեև հարուստ է Արևելյան Հայաստանին վերաբերող պատմական տեղեկություններով, սակայն հաճախ իրադարձությունները լրասբանում է Իրանի համար շահավետ տեսանկյունից:

Ներսեսովի որպես ակնմատեսի վկայությունները դարասկզբին ռուս-իրանական փոխհարաբերությունների վերաբերյալ մեծ չափով լրացնում են ռուսական աղբյուրները և հարստացնում այդ շրջանի պատմությունը նոր մանրամասներով:

Այստեղ մենք գտնում ենք XIX դարի Ղարաբաղյան պատմագրության մեջ ռուս-պարսկական պատերազմների (1-ինը՝ 1804-1813թթ., 2-րդը՝ 1826-1828թթ.) առավել ամբողջական, հանգամանակից ու հավաստի պատմությունը:

Հեղինակը նոր նտեցում է հանդես բերում 1806թ. Ղարաբաղում ծավալված դեպքերի ու Իբրահիմ խանի սպանության հանգամանքների նկատմամբ: Նորովի են լրասբանված նաև 1812թ Մուլսանբաղի ու Ալանդուզի ճակատամարտերը պարսկական ու ռուսական զորքերի միջև:

Ներսեսովը ամենայն մանրամասնությամբ վերլուծում է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի դրդապատճառները: Նրա երկում արտացոլվել են ռուս-պարսկական փոխհարաբերությունների հետզհետե սրումը և պատերազմի բռնկմանը հանգեցնող գրեթե բոլոր հանգամանքները: Հեղինակը հիշատակում է նաև պատերազմի սանձազերծմանը դեմ պարսից իշխանավորների փոքր խմբի անգոր ջանքերի մասին:

«Թարիխ-ե Սաֆի»-ում կարևոր տեղեկություններ կան պարսկական բանակի ընդհանուր վիճակի, նրա կազմի ու կառուցվածքի, առանձին զորամիավորումների, նրանց հրամանատարական կազմի ու ռազմական գործողությունների վերաբերյալ:

Պատմական եզակի արժեք ունեն հեղինակի, որպես պարսկական բանակում գտնվող ականատեսի վկայությունները Շուշիի պաշարման, 1826թ. Շամխորի ու Գանձակի ճակատամարտերի մասին: Ներսեսովը նոր տեղեկություններ է հաղորդում նաև 1826թ. Մաղաբովի Ղարաղաղ կատարած արշավանքի, Ջևանբուլաղի ճակատամարտի ու Աբբասբաղ ամրոցի գրավման, պատերազմի վերջնական փուլում ռուսական զորքերի Ղարաղաղ ներխուժելու ու պատերազմական հաջողությունների մասին:

ՀԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնական նպատակը «Թարիխ-ե Սաֆի»-ի, որպես Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության սկզբնաղբյուրի հանակեղծմանի ուսումնասիրությունն է:

Գլխավոր խնդիրներն են՝

- Ուսումնասիրել «Թարիխ-ե Սաֆի»-ի տեղը Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ:

- Որոշել նրա կոնսպիկառիվ ու սկզբնաղբյուրի արժեք ունեցող մասերը, ինչպես նաև հեղինակի օգտագործած աղբյուրները:

- Զննել ու վերհանել «Թարիխ-ե Սաֆի»-ի պատմագիտական արժեք ներկայացնող հաղորդումները:

- Նոր ու հավաստի տվյալները հաշվի առնելով քննել հիշյալ ժամանակահատվածի Ղարաբաղի պատմությունը:

- Վերհանել նկատված անճշտությունները և դրանց հանդես գալու պատճառները:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսը առաջին անգամ փորձում է հայագիտություն ներմուծել Միրզա Յուսուֆ Ներսեսովի դեռևս շուսումնասիրված պատմական աշխատությունը՝ դիտարկելով նաև նրա տեղը XIX դարի դարաբաղյան պատմագրության մեջ:

Նրա պատմական կարևոր վկայությունների հավաստիությունը քննելուց հետո դրանց հիման վրա ճշգրտումներ և լրացումներ են կատարվում Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության մեջ: Մասնավորապես, «Թարիխ-ե Սաֆի»-ի պատմական տեղեկությունների հիման վրա պարզաբանումներ են կատարվում XVIII դարի երկրորդ կեսում Ղարաբաղի Խամսայի հայկական մեխիթրությունների և մահմեդական խանության քաղաքական պատմության առանձին հարցերում:

Վեր են հանվում ու մեկնաբանվում Ներսեսովի հաղորդած արժեքավոր տեղեկությունները XIX դարի սկզբի ռուս-պարսկական փոխհարաբերությունների և հատկապես նրանց միջև տեղի ունեցած բնիադրումների վերաբերյալ:

ՄԿԶԲՆԱԿԱՐՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը գրվել է Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» աշխատության ձեռագրի ֆոտոպատճենի հիման վրա³:

Համեմատության ու աղբյուրագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել են Ղարաբաղում XIX դարում ստեղծված պատմական աշխատությունները: Դրանք են Միրզա Աղիզոյալ-բեկի «Ղարաբաղ-նամե»⁴, Միրզա Ջամալի «Թարիխ-ե Ղարաբաղ»⁵, Առ. Կոստանյանցի երկհատորյա «Պատմություն Արցախի»⁶, Հակոբ Չաքարյանցի «Պատմություն գավառին Արցախու»⁷, Բաֆիու «Խամսայի մեխիթրություններ»⁸ և Վարդան Օձնեցու «Պատմություն հայոց»⁹ պատմագրական երկերը:

Միրզա Աղիզոյալ-բեկը իր աշխատությունը գրել է 1845-1848թթ., աղբյուրներն լեզվով և ընդգրկել Ղարաբաղի պատմության XVIII դարի կեսից մինչև 1828թ. ընկած ժամանակահատվածը: Միրզա Ջամալն իր պարսկերեն «Թարիխ-ե Ղարաբաղ» երկը սկսել է գրել 1847թ. և դեպքերի շարադրանքը հասցրել մինչև 1813թ.: Մահմեդական հեղինակները իրենց երկերում շեշտը դրել են Ղարաբաղի խանության շրջանի քաղաքական պատմության վրա:

Առ. Կոստանյանցը իր երկհատորյա «Արցախի պատմությունը» գրել է 1854-1864թթ.: Չնայած հեքիաթային պատմությունների առատությանը, «Արցախի պատմությունը» առատ պատմական տեղեկություններ է պարունակում Դիզակի հայ մեխիթրության¹⁰ և 1826-1828թթ.

³ «Թարիխ-ե Սաֆի»-ի միակ մեզ հայտնի ձեռագիրը գտնվում է Վր. Հան, Կ. Կեկելիձեի անվան ձեռ. ինստ., Արևելյան լեզուների բաժնում, P- 195 համարի տակ, այն չի հրատարակվել: Չեռագրի ֆոտոպատճենը մեզ էր տրամադրել պրոֆ. Հ. Վ. Փափաջյանը:

⁴ Мирза Адигезаль-бек, "Карабаг-Наме", Баку 1950.

⁵ Мирза Джамаль Джеваншир Карабаги, "История Карабага", Баку 1959.

⁶ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 7822, 7823:

⁷ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2734:

⁸ Բաֆիի, Երկերի ժողովածու, հ. 10, էր. 1964, էջ 161-383:

⁹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4331:

¹⁰ Դիզակի մեխիթրությանը վերաբերող պատմական տեղեկությունները հրատարակվել են Ազգագրական Ընկերության կողմից՝ «Նիսբեր հայ մեխիթրությունների մասին», պրակ Ա, Վաղարշապատ 1913:

ոուս-պարսկական պատերազմի ընթացքում Ղարաբաղում տեղի ունեցած ռազմական իրադարձությունների մասին:

Երուսաղեմի վանքի միաբան Հակոբ Ջարաբյանցի 1853թ. գրված «Պատմութիւն Արցախի» համառոտ երկը նվիրված է Շուշիի հիմնադրման և Իրանի Աղա Մուհամմադ շահի 1795-1797թթ. արշավանքների ընթացքում Ղարաբաղում զարգացող իրադարձությունների նկարագրությանը:

Հայ և օտար սկզբնաղբյուրներից քաղած առատ պատմագրական նյութի հիման վրա է շարադրված Բաֆիու «Մասնայի մեխրությունները» պատմական ուսումնասիրությունը¹¹: Քանի որ հայ մեծ պատմավիպասանի օգտագործած աղբյուրների մի մասը չի պահպանվել, ուստի նրա աշխատությունը ևս ունի կարևոր սկզբնաղբյուրի արժեք:

Վարդան Օձնեցին հիմնվելով Միրզա Աղիգոյալ-բեկի վերջ նշված աշխատության¹² և այլ աղբյուրների վրա իր երկում շարադրել է ինչպես Ղարաբաղի, այնպես էլ հարևան երկրների XVIII-XIX դարերի պատմությունը:

Ղարաբաղի տվյալ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Մ. Չամչյանի «Հայոց պատմության» III հատորում¹³, որի մի մասը հեղինակի խնդրանքով գրել է Խաչատուր Ջուղայեցին¹⁴:

XVIII-XIX դարերի հայ ժողովրդի պատմության հայկական կարևոր սկզբնաղբյուրներից են «Դիվան Հայոց պատմության» շարքում հրատարակված հիշատակարանները¹⁵: Օգտագործված հայկական աղբյուրների շարքում պետք է նշել նաև Վ. Հակոբյանի կողմից հրատարակված «Մանր Ժամանակագրությունները»¹⁶:

XVIII դարի Ղարաբաղի որոշ իրադարձությունների տարեթվերի ճշգրտման հարցում կարևոր նշանակություն ունեն վիմագիր արձանագրությունները, որոնք հրատարակվել են մասամբ Մ. Բարխուդարյանցի «Արցախ»-ում, Ս. Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» աշխատություններում և «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 5-րդ պրակում¹⁷:

XVIII-XIX դարերի Արևելյան Հայաստանի քաղաքական պատմությանը վերաբերող հարուստ փաստագրական նյութ է հրատարակվել հայ-ռուսական հարաբերությունների և Անդրկովկասի հայկական տարածքների Ռուսաստանին միացվելու պատմությանը նվիրված ժողովածուներում¹⁸:

XIX դարի սկզբին պատմական աշխատություններ են գրվել նաև Արևելյան Անդրկովկասի մյուս երկրների՝ Շաքիի, Շիրվանի, Ղուբայի ու Թալիշի խանությունների պատմության վերաբերյալ¹⁹: Ղարաբաղի պատմության առանձին իրադարձությունների վերաբերյալ ամօքավոր տեղեկություններ կան հարևան երկրների պատմությանը նվիրված երկերում, որոնցից օգտագործել ենք Աբբաս Կուլի-աղա Բակիխանովի «Գյուլիստան-ե Իրան»²⁰, Քերիմ աղա Ֆաթեհի «Շաքիի խաների պատմություն», Սեիդ Հաջի Արզու Համդի «Շաքիի խաների ու նրանց ժառանգների սերնդաբանությունը»²¹:

Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն վրացական սկզբնաղբյուրների վկայությունները²²:

¹¹ Բաֆիի, Խամսայի մեխրությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան 1964, էջ 358-382
¹² Վարդան Օձնեցի, նշվ. մեռ., էջ 47:
¹³ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. 9, Ե. 1984:
¹⁴ Խաչատուր արևոյալ Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, Վաղ. 1905, էջ 60:
¹⁵ Դիվան Հայոց պատմության. գիրք Ա-ԺԳ, Թիֆ. 1893-1834:
¹⁶ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դարեր, հ. 1, Եր. 1951; հ. 2, Եր. 1956:
¹⁷ Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու 1895; Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփլիս, 1842, հ. 1, 2; Դիվան հայ վիմագրության, արակ 5, Արցախ, կազմեց Մ. Բարխուդարյան, Ե. 1982:
¹⁸ Армяно-русские отношения в 18-м веке. Сборник документов. т. 3, Е. 1976, т. 4, Е. 1990; М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. 1, Е. 1956.
¹⁹ Абдуллаев, ук. соч., с. 41-42..
²⁰ А. Бакиханов, Гюлистан-ирам, Баку 1926.
²¹ Из истории Шекинского ханства, Баку 1958.
²² Լ. Մելիքեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9, Ե. 1955:

Արևելյան Հայաստանի XVIII-XIX դարերի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից Իրանի XIX դարի պալատական պատմագիրներ Ռեզակուլի խան Հեղայաթի «Ռոուզբ-աս-Սաֆա-ե Նասերի»²³ (պրակ.- «Անբիժ մարբուրյան այգի») և Արդ-առ-Ռազակ Դուբրովի «Մասսեր-ե Մուլթանի»²⁴ (պրակ. «Արբայական հիշատակարան») աշխատությունները:

Ընդհանրապես Արևելյան Հայաստանի նշված ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար բարձր արժեք ունեն պարսկական հրովարտակները՝ տրված հայ մեղիքների Ղարսկաստանի շահերի ու Երևանի, Ղարաբաղի խաների կողմից: Այդ կարևոր փաստաթղթերը (պրակ.-բա'լիդ) բազմաթիվ տվյալներ են պարունակում այդ իշխանավորների նշանակման ժամանակի ու հանգամանքների, նրանց կալվածքների, ինչպես նաև նրանց և մյուս իշխանավորների, խաների միջև փոխհարաբերությունների մասին: Երևանի Մատենադարանի «Վարդիկրոսական Դիվանի» և «Մելիք-Շահնազարյանների» ֆոնդերում կան XVIII-XIX դարերի բազմաթիվ հրովարտակներ՝ տրված մահմեդական տիրակալների կողմից, որոնց տեղեկությունները կարևոր են նշված շրջանի Ղարաբաղի պատմության հարցերի պարզաբանման համար:

Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի XVIII դարի պատմության վերաբերյալ հարուստ տեղեկություններ կան ռուսական սկզբնաղբյուրներում և պատմագրական երկերում, որոնցից են «Հայ ժողովրդի պատմության վերաբերող փաստագրական նյութերի ժողովածու»-ի հատորներում և ռուս պատմագիր Պ. Գ. Բուտկովի²⁵ պատմագրական երկում: XIX դարի սկզբի Անդրկովկասի պատմության լավագույն սկզբնաղբյուրներից են Վ. Պոտտոյի²⁶, Ն. Ֆ. Դուբրովինի²⁷, պատմագրական աշխատությունները և «Կովկասյան Հնագիտական Հանձնաժողովի կազմած փաստաթղթերի ժողովածու»-ի²⁸ ու «Կովկասյան ժողովածու»-ի²⁹ հատորները:

Ղարաբաղի պատմության վերոհիշյալ ժամանակաշրջանի պատմության հարցերը քննելիս օգտագործված մասնագիտական գրականությունից ու պատմական ուսումնասիրություններից կուգենայինք հիշատակել հետևյալ հեղինակների աշխատությունները. Ա. Գ. Աբրահամյան³⁰, Ղ. Ալիշան³¹, Բ. Բալայան³², Վ. Ռ. Գրիգորյան³³,

²³ Ռեզակուլի խան Հեղայաթ, Ռոուզբ-աս-Սաֆա-ե Նասերի, հ. 9, Թեհրան 1339 հ. ք (պակ):
²⁴ Արդ-առ-Ռազակ իբն Նաջաֆկուլի Դուբրովի, Մասսեր-ե Մուլթանի, 1-ին հրատ. Թավրիզ 1241 հ. ք., 2-րդ իրատ. Թեհրան 1392 հ. ք (պակ):
²⁵ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1-3, М., 1833-1838. П. Г. Бутков Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803гг, чч. 1,2, СПб 1869;
²⁶ Утверждение русского владычества на Кавказе, т. 1, Тифлис 1901; т. 2, Тифлис 1902; т. 4, ч. 1, т. 4, ч. 2, Тиф. 1906.: В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 1-4, вып. 1-4, СПб. 1885-1888.
²⁷ Н. Дубровин, История войн и владычества русских на Кавказе, т. 1-3, СПб. 1871, 1886.
²⁸ Акты, собранные Кавказскою Археографическою комиссиею (АКАК), т. 1-12, Тифлис 1866-1888.
²⁹ Кавказский Сборник, т. 1-29, Тиф. 1876-1909.
³⁰ Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան. ՀՍՍՀ ԳԱ իր., 1953, 280:
³¹ Ղ. Ալիշան, Սրակական Տեղագրություն Սյունյաց աշխարհի, Վենետիկ, Ի Միլիթայան վան. ի ս. Ղազար, 1893, 561 էջ: Ղ. Ալիշան, Արցախ, Երևան. 1993թ.
³² Б. П. Балаян, Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России, Ереван, изд. АН АрмССР, 1988,
³³ Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջին (1780-1800), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1958,

Գ. Մ. Գրիգորյան³⁴, Լեն³⁵, Ա. Հակոբյան³⁶, Պ. Գ. Հարությունյան³⁷, Ա. Ռ. Հովհաննիսյան³⁸, Մ. Ներսիսյան³⁹, Հ. Փավհազյան⁴⁰, Ի. Պետրոսյան⁴¹, Ի. Շուպեն⁴², Ն. Կուզնեցովա⁴³:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդական հիմքը կազմում են պատմա-համեմատական ու արդյուրագիտական վերլուծությունը, որի ժամանակ քննվում է «Թարիխ-ե Սաֆիի» ձեռագրի ֆոտոպատճենը: Նրա պատմական տեղեկությունների հավաստիությունը ստուգելու համար հաշվի են առնվել ժամանակահատվածն ընգրկող մեզ հայտնի ու մատչելի ողջ պատմական գրականության հարողումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Թարիխ-ե Սաֆիի» առանձին հարողումներ պարունակում են հավաստի կարևոր փաստեր, որոնք XVIII-XIX դարերի Ղարաբաղի պատմության համար բարձր արժեք ունեն և բացի այդ կարող են օգտակար լինել Արցախի շուրջ ծագած արդի քաղաքական խնդիրների կարգավորման հարցում: Այն կարող է օգտագործվել ԲՈՒՀ-ում Արցախի պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

Ատենախառայան հիմնական դրույթները շարադրված են ատենախոսի կողմից Երիտասարդ արևելագետների 17, 18, 19-րդ գիտական մատչելիություններում կարդացված գեղուցումների թեգերում և «Մերձավոր Արևելքի երկրներ ու ժողովուրդներ» ժողովածուի XVII հատորում տպագրված «Ղարաբաղի պատմության լուսաբանությունը 19-րդ դարի պատմագրության էջերում» հոդվածում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՒՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և հավելվածից, որտեղ գետնված է «Թարիխ-ե Սաֆիի»-ի VIII և IX գլուխների բարգձմանությունը:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, ներկայացվում նրա գիտական նորույթը, գործնական կիրառությունը, նշվում են ուսումնասիրության հիմնական նպատակն ու խնդիրները, նրանում օգտագործված պատմական սկզբնաղբյուրները և գիտական գրականությունը:

Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆիի»-ի հավաստի վկայությունները ճշգրտում ու լրացնում են Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմությունը: Նրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Խանսայի մեխիթարիների XVIII դարի երկրորդ կեսի պատմության առանձին հարցերի շուրջ:

³⁴ Գ. Մ. Григорян, Очерки истории Сюника 9-15-х вв., Ереван, изд. АН АрмССР, 1990
³⁵ Լեն. Հայոց պատմություն. Երկրի ժողովածու, հ. III, գիրք I, 511 էջ; հատոր III, գիրք II, 638:
³⁶ А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е. 1987
³⁷ П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти 18-ого века, Москва, АН СССР, 1954
³⁸ А. Р. Иоаннисян, "Россия и армянское освободительное движение в 80-х годах 18-ого столетия", Ереван, изд. Гос. ун-та АрмССР, 1947г, 287с.А. Р. Иоаннисян, "Иосиф Эмин", Ереван, изд. гос. ун. 1945
³⁹ М. Нерсисян, Из истории русско-армянских отношений. кн. I, Ереван, АН АрмССР, 1956
⁴⁰ А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении, Ереван изд. АН АрмССР, 1972
⁴¹ И. П. Петрушевский, Очерки из истории феодальных отношений Азербайджана и Армении в 16-м начале 19в.в., Ленинград, изд. Лен. Гос. ун. им. А. А. Жданова, 1949, И. П., Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране 13-14-х веков, М.-Л. 1960.
⁴² И. Шолен, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб. 1852
⁴³ Н. А. Кузнецова, Иран в первой половине 19-го века, М.-Л. 1983г.

«Թարիխ-ե Սաֆիի»-ում պատմա-քաղաքական կարևոր տվյալներ ու մանրամասներ կան Ղարաբաղի այդ մեխիթարիներից յուրաքանչյուրի տարածքի և Ղարաբաղի մահմեդական խաների դեմ մղած պայքարի պատմության վերաբերյալ:

XVIII դարի կեսերին ստեղծված Ղարաբաղի խանությունը Անդրկովկասի այդ ժամանակաշրջանի ամկախ պետական կազմավորումներից էր, որը 80-90-ական թվականներին հասնելով իր հզորության գագաթնակետին, յոթ ազդեցության տակ էր առել հարևան մի քանի խանություններ: «Թարիխ-ե Սաֆիի»-ում մանրամասն ներկայացվում է այդ խանության սկզբնավորման ու զարգացման պատմությունը: Այստեղ իրենց արտացոլում են գտել Ղարաբաղի խաների պայքարը հարևան խաների ու Իրանի տիրակալների ոտնձգությունների դեմ, մանրամասն նկարագրվում են նրա առանձին դրվագներ, որոնց շնորհիվ վերականգնվում է դեպքերի իրական ընթացքը:

Բարձր արժեք ունեն հատկապես XIX դարի սկզբի ռուս-պարսկական փոխհարաբերությունների և պատերազմների պատմությանը վերաբերող տեղեկությունները, որոնք հաճախ գրված են ակամատեսի ու դեպքերին լավատեսյակ անձնավորության ձեռքով:

Առաջին գլխում, որի վերնագիրն է «Միրզա Յուսուֆ Ներսեսովի կյանքն ու գործունեությունը», ի մի են բերվում մեզ հայտնի բոլոր տվյալները հայազգի պատմագրի կենսագրության վերաբերյալ, որոնք քաղել ենք գանձազան արչություններից:

Հովսեփը («Յուսուֆ»-ը նույն անվան արաբա-պարսկական տարբերակն է) ծնվել է 1798թ. Ղարաբաղի Հաղրուք գյուղում, Ախալցխի գաղթած հայի ընտանիքում: 8-9 տարեկան հասակում գերվում է պարսիկ ավարառուների կողմից և տարվում Իրան: Այստեղ երկուսն էլ ներկայացվում են շահին, մահմեդականացվում ու կրթություն ստանում հեռագայում պալատական ծառայության անցնելու համար: Ազգապա պատմագիրը սովորում է պարսկերեն, թուրքերեն և արաբերեն լեզուները, որից հետո որպես գրագիր (միրզա) աշխատանքի է անցնում պալատական բարձրաստիճան պաշտոնյա Ամիր խան սարդարի գրագրատանը (արսկ.- «դիվանխան»): Այստեղ իր պաշտոնավարության 18 տարիների ընթացքում, ինչպես ինքը՝ հեղինակն է նշում. «Կատարելապես տիրապետեցի նրանց լեզվին [պարսկերենին] և ճանապարհորդությունների ժամանակ ծանոթացա տարբեր գեղերի ու ժողովուրդների հետ»⁴⁴:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին շարունակելով վարել իր պաշտոնը և գտնվելով Ղարաբաղ-Ներխուժած Ամիր խան սարդարի գորաբանակում՝ Ներսեսովը ակամատես է լինում այնտեղ ծավալված ռազմական գործողություններին⁴⁵:

1828թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո Միրզա Յուսուֆը հայրենի Ղարաբաղ է վերադառնում: Բաղդասար արքեպիսկոպոս Հասան Ջալալյանը նրան մկրտում է⁴⁶: Միրզա Յուսուֆի առաջին կինը, որ Թավրիզի թրքուհի էր, չի ցանկանում քրիստոնեություն ընդունել և բաժանվում է: Երկրորդ կինը՝ Շողակաթը, հայուհի էր և նրա բոլոր 5 զավակների՝ Ալեքսանդրի, Եկատերինայի, Նիկոլայի, Ներսեսի⁴⁷ ու Աննայի մայրը:

Հայրենիքում Ներսեսովը որոշ ժամանակ մանկավարժությանը է զբաղվում: 1847-1848թթ նա ազերի քյուրքերեն ու պարսկերեն է դասավանդում Շուշիի Հայոց Թեմական դպրոցում⁴⁸: Հետագայում նա բացում է մասնավոր արական դպրոց, որը 1853թ. ինչ-ինչ պատճառներով փակվում է⁴⁹: Այնուհետև Միրզա Յուսուֆը տեղափոխվում է Դաղստան և ծառայության անցնում իյուսիսային Դաղստանի գորբերի հրամանատար Գ. Օրբելիանու մոտ որպես քարգանձիչ⁵⁰:

⁴⁴ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 2թ:
⁴⁵ Մ Մաշտոցի անվան Մատենադարան, արարատյան ձեռ. ֆ., ձեռ. 579; 239:
⁴⁶ Сеид-Задэ, ук. соч., с. 13
⁴⁷ Միրզա Յուսուֆ Ներսեսովի Ներսես որդին (1848-1894թթ) Մոսկվայի Համալսարանի քաղաքացիական իրավունքի սմբիոնի պրոֆեսորներից է եղել, և նրա մասին համառոտ տեղեկություններ կան 19-րդ դարի ռուսական հանրագիտարանում. (Энциклопед. сл., под ред. Ю. С. Гамбарова, т. 30, с. 149).
⁴⁸ Լեռ. Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս 1914, էջ 204:
⁴⁹ АКАК, т. 11, с. 739: Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 119թ. 149ա:
⁵⁰ Сеид-Задэ, там же:

իր կյանքի այս շրջանում է Ներսեսավը գրում «Թարխիս-ե Սաֆի»-ն Օրբելիանու պատվերով և ներկայացնում Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին⁵¹: Այստեղ, Դաղստանի Դեմիր-խան-Շուրա (ներկայիս Բուլնակ) քաղաքում հեղինակը 1857թ. վիճառի պեղանակով հրատարակում է XVIII-XIX դարերի բյուրքավեդու պոեզիայի իր հավաքածուն՝ «Վաղիֆի ու նրա մյուս ժամանակակիցների բանաստեղծությունների ժողովածու» վերնագրով⁵²:

Միրզա Յուսուֆ Ներսեսավը իր ժամանակի պարսկերեն ձեռագրերի լավագույն ընդօրինակող-մատենագիրներից (պրսկ.-xosnevis) էր. Երևանի Մատենադարանում պահպանվում են նրա ընդօրինակած երկու պարսկերեն ձեռագրեր⁵³:

Միրզա Յուսուֆ Ներսեսավի մահվան ստույգ ժամանակը հայտնի չէ: Մեիդ-Ջադեն հեքթում է Յ. Մ. Դամբարովի նշած նրա մահվան 1859թ.: Սակայն հայտնի չէ, թե ինչ աղբյուրների վրա հենվելով, նա պնդում է, որ Մ. Յ. Ներսեսավը մահացել է 1864թ. Դարաբաղում⁵⁴:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է ««Թարխիս-ե Սաֆի»-ի տեղը Դարաբաղի XIX դարի պատմագրության մեջ և նրա պատմական սկզբնաղբյուրները», ներկայացվում են սոցիալ-քաղաքական այն նախադրյալները, որոնք նպաստում են Դարաբաղում XIX դարի կեսերից նկատվող պատմագրության զարգացմանը:

Պատմագրության վերելքին նպաստում են ինչպես երկարատև խաղաղությունը, որը հաստատվել էր Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, այնպես էլ ռուս բարձրաստիճան պաշտոնյաների ցուցաբերած հետաքրքրությունը իրենց ենթակա տարածքների պատմական անցյալի նկատմամբ⁵⁵: Սակայն փոքր չէր նաև Դարաբաղում մեկ այլ գործոնի դերը տեղի պատմագրության զարգացման հարցում: Այդ գործոնը նրկու հակամարտ կողմերի (քրիստոնյա հայերի և բյուրքական ու բրդական բուլղոցների) առկայությունն էր Դարաբաղում և նրանց միջև շղաղաբող ներքին պայքարը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում գերիշխող դիրքեր գրավելու համար:

1822թ. Ռուսաստանի գավառներից մեկը դարձած Դարաբաղում իրար հետ կողք-կողքի պարում էին հայերը՝ հիմնականում պատմական Արցախի լեռնային շրջաններում և բյուրքական ու բրդական բուլղոցների (քրիստոնյա հայերի և բյուրքական ու բրդական բուլղոցների) առկայությունն էր Դարաբաղում և նրանց միջև շղաղաբող ներքին պայքարը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում գերիշխող դիրքեր գրավելու համար:

⁵¹ Ներսեսավ, նշվ. ձեռ., էջ 3բ:
⁵² Ներսեսավ, «Վաղիֆի ու մյուսների բանաստեղծությունների ժողովածու», Դեմիր-խան-Շուրա 1856, էջ 3-6, Մ. Մաչատրյանի անվան Մատենադարան, պրսկ. տպ. գրքերի ֆոնդ, 158:
⁵³ Առաջինը «Թուրքա»-ե Թեյմուրի» ձեռագիրն է ընդօրինակված 1827-1828թթ Թեյմուրի Գուլիսկ անտանցում, քրիստոնյա դեպարտման Մանի պատվերով (Մ. Մաչատրյանի անվան մատենադարան, ձեռ. 579): Երկրորդը «Գերբենդ-նամեի» նոր խմբագրությունն է կատարված 1856թ Դեմիր-խան-Շուրայում Հ. Ազադյանցի պատվերով (Մ. Մաչատրյանի անվան Մատենադարան, ձեռ. 239):
⁵⁴ Сеид-Задэ, ук. соч., с. 17.
⁵⁵ 1844թ. Վրացա-Իմերեթական նահանգի նահանգապետին է ներկայացվում Ա. Բակիխանովի «Գլուխտուս-Իրան» աշխատությունը (տես՝ А. Бакиханов, Сочинения. Записки. Письма, Б. 1983, с. 320)

Դարաբաղի գավառապետ փոխգնդ. Կուլեբայկինի պատվերով գրվել ու Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին է ներկայացվել Միրզա Անխյուզավ-բեկի «Դարաբաղանեն», տես՝ Мирза Алигеаль-бек, "Карабагname", Баку 1950, с. 43:

Նույն փոխարքային է ներկայացվել նաև Շահմալի-խան Բեգյույանի պատվերով գրված Միրզա Ջամալ Ջևանիի «Դարաբաղի պատմությունը», տես՝ Мирза Джемаль-Джеваншир Карабагский, История Карабага, Баку 1959, с. 61:

⁵⁶ XVIII դարի տվյալներով Դարաբաղում հայության թիվը հասնում էր 60000 տան (ԱԿԱԿ, տ. 2. Тифлис 1866, с. 623) իսկ այնտեղի բուլղոցներինը 20000 փրանի (Петрушевский, ук. соч., с. 136, հոլմը՝ Մահամադ Սադեղ, Թարխիս-ե Վիքի գլուխ, էջ 105, (պրսկ.)):

Ջրաբերդի, Խաչենի ու Գուլիստանի, ինչպես նաև հարևան Միսիանի, Կապանի, Քաշաթաղի և Գանձակի հայ մեկիթների իշխանության տակ⁵⁷: XVIII դարի կեսերից Դարաբաղի խաների տիրապետության շրջանում Արցախի վերը նշված հայ մեկիթությունների տարածքների մի մասը անցնում է մահմեդական ազնվականության՝ բեկերի ձեռքը⁵⁸:

1822թ. Դարաբաղի խանությունը առանց որևէ տարածքային փոփոխության վեր է ավելում «Դարաբաղի գավառի» (ռուս.-провинция), որը Շարիֆ, Շիրվանի ու Թալիշի նախկին խանությունների հետ միավորվում է «մահմեդական նահանգ» (ռուս.-мусульманский округ) կոչված վարչական միավորի մեջ: Անփոփոխ է մնում նաև երկրի վարչական բաժանումը 21 մահալների, որոնց գլուխ կանգնած էին նախընթաց (հայ մեկիթները կամ էլ մահմեդական ազնվականները՝ բեկերը)⁵⁹:

Պետք է նշել, որ ցարական իշխանությունները իրենց անցկացված վարչական ռեֆորմներում հաշվի չէին առնում անդրկովկասյան տարածքների բնակչության ազգային կազմը⁶⁰: Այս պատճառով Դարաբաղի հայկական հոծ բնակչություն ունեցող տարածքները չեն միացվում ոչ 1828թ. ստեղծված Հայկական Մարզին և ոչ էլ հետագայում՝ 1849թ. ստեղծված Երևանի մահանգապետությանը: Փաստորեն արցախահայությունը, որը դեռևս XVIII դարի 20-ական թվականներից իր հայրենիքի անկախության համար մղած պայքարում մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ և իր ռազմական աջակցությամբ օժանդակում նրա տիրապետության հաստատմանը Անդրկովկասում, իր սոցիալ-քաղաքական վիճակում էական քարեկավանս չի հասնում⁶¹:

1828թ. հետո Դարաբաղ վերադարձած նախկին խանը, նրա ազգականներն ու ազդեցիկ բեկերը ձգտում էին այստեղ վերականգնել այն դրությունը, որ ստեղծվել էր Դարաբաղի Իբրահիմ խանի ու Կովկասյան տարածքների կառավարչապետ Պ. Յիգիանովի միջև կնքված պայմանագրով, այսինքն՝ խանությունը, որը ներքին կառավարման հարցում կունենար ինքնուրույնություն⁶²:

1846թ. Կովկասյան փոխարքա նշանակված Մ. Ս. Վորոնցովը անց է կացնում տեղի ազնվականների կալվածատիրական իրավունքները ամրապնդող ռեֆորմ, որով փորձ է արվում նրանց դարձնել ցարիզմի սոցիալական հենարանը Անդրկովկասում⁶³:

Նե՞նց այս շրջանում, այսինքն XIX դարի 40-ականների կեսերից է, որ մահմեդական բեկերը սկսում են գրել պատմական աշխատություններ՝ նվիրված Դարաբաղի խանության պատմությանը: Մինչ այդ չի գրվել որևէ պատմագրական երկ դարաբաղի մահմեդական որևէ հեղինակի կողմից, ուստի նրանց հանդեմ զալը պետք է կապել նաև ռուսական քաղաքականության այս վերջին ուղղվածության հետ:

Այսպիսով, մի կողմից տեղի մահմեդականները, ցանկանալով վերականգնել խանական շրջանում իրենց արտոնությունները և գերիշխող դիրքերը տեղի հայության նկատմամբ, մյուս կողմից էլ հայերը, ջանալով պաշտպանել իրենց իրավունքները և ռուսական կառավարությանը ցույց տալ իրենց դերն ու մասնակցությունը երկրի նախորդ դարի քաղաքական կյանքում, XIX դարում ստեղծում են մի շարք պատմագրական երկեր՝ նվիրված Դարաբաղի XVIII-XIX դարերի պատմությանը:

⁵⁷ Նշված հայ մեկիթությունների մասին տես՝ П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти 18-ого века, М. 1954, с. 47-86:
⁵⁸ XIX դարի սկզբին Դարաբաղի իսլամադավանների մեծ մասը պատկանում էր խանական ընտանիքի անդամների, ազնվականների ու պաշտոնյաներին (տես՝ Описание Карабагской провинции со полк. Ермоловым и Могилевским в 1823г, Тифлис 1866.ст. полк. Ермоловым и Могилевским в 1823г, Тифлис 1866). որը նշանակում է, որ որսնք ձեռք էին բերվել տեղի խաների՝ հստակապես վերջին խան Մեհլի Գուլի իշխանության (1806-1822թթ) տարիներին (Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края , т. 6, Тиф 1887, с. 341):
⁵⁹ История Азербайджана, т. 2, Баку 1960, с. 20-21:
⁶⁰ А. М. Мильман, Политический строй Азербайджана в 19- нач. 20-ого веков, Бдкы 1966, с. 113-114:
⁶¹ Վ. Պաշաևյան, Յարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան 1940, էջ 140:
⁶² Там же, с. 29.
⁶³ Мильман, ук. соч., с.133: Адонц, ук. соч., с. 133-149.

Հայ և այլազգի հեղինակների պատմական աշխատությունները միմյանցից տարբերվում են որոշակի բովանդակային ու ժամանակագրական առանձնահատկություններով: Այլնզգի (հիմնականում քյուրթական ծագում ունեցող) հեղինակների աշխատություններում շարադրված է Ղարաբաղի խանության պատմությունը՝ սկսած նրա հիմնադրումից մինչև Ռուսաստանի տիրապետության տակ անցումը (1813թ) կամ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը (1828թ):

Այդ խմբին են պատկանում Միրզա Աղիզոգալ-բեկի աղբյուրներն «Ղարաբաղնամե» (գր. 1845թ)⁶⁴, Միրզա Ջամալ Ջևանշիրի պարսկերեն «Թարիխ-ե Ղարաբաղ» (գր. 1847թ)⁶⁵, Միր Մեհդի Խազանիի «Քերար-ե քարիխ-ե Ղարաբաղ»⁶⁶, Ահմեդ-բեկ Ջևանշիրի Շուշում 1901թ. ռուսերեն տպագրած «Ղարաբաղի 1747-1805թթ. քաղաքական կացության մասին» գիրքը⁶⁷, Ռ-գագուլի-բեկ Միրզա Ջամալովի⁶⁸ և Հասան-Ալի խան Ղարաղաղի⁶⁹ «Ղարաբաղնամե» խորագիրը կրող ձեռագրերը և Աբդու-Սամեդ-բեկ Բահման Միրզայի «Շուքրյունամե»⁷⁰ աշխատությունները:

Թյուրքալեզու հեղինակները նպատակ ունենալով փառաբանել Ղարաբաղի խաների գործերը, նրանց հզորությունը՝ իրենց աշխատություններում չեն կարողացել անտեսել թե՛ տեղի հայ մելիքությունների և թե՛ հայ բնակչության հետ կապված հարցերը: Միաժամանակ ցանկանալով անհիմն կերպով այդ խաներին վերագրել ռուսական կողմնորոշում՝ նրանք լուրջան են մատնել կամ խեղաթյուրել այն պատմական իրադարձությունները, որոնցում դրսևորվում էին խաների հակառուսական տրամադրությունները⁷¹:

Հիշյալ բերություններով հանդերձ այս խմբի պատմագրական երկերը իրենցից որոշակի արժեք են ներկայացնում XVIII դարի երկրորդ կեսից XIX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում Ղարաբաղում գոյատևած մահմեդական խանության պատմության ուսումնասիրության համար:

Պատմական սկզբնաղբյուրների մյուս խումբն են կազմում տեղի հայ գործիչների երկերը՝ նվիրված Ղարաբաղի պատմության վերոհիշյալ ժամանակաշրջանի գանազան իրադարձություններին ու տեղի հայ մելիքությունների, մահմեդական խանության պատմության առանձին հարցերի լուսաբանմանը: Հայկական այս պատմագրական երկերի մի մասը չի պահպանվել, սակայն Բաֆիու «Խամայի մելիքությունները» (1885թ) պատմական արժեքավոր ուսումնասիրության շնորհիվ մենք հնարավորություն ունենք ծանոթանալու դրանցում պարունակվող պատմական տեղեկություններին:

Մեծ վիպասանին հաջողվել է շարադրել XVII-XIX դարերի Ղարաբաղի հայ մելիքությունների ու նաև մահմեդական խանության առավել հավաստի և մանրամասն պատմությունը:

Բաֆիու ուսումնասիրության մեջ չօգտագործված եզակի սկզբնաղբյուրներից Հակոբ Ջաբարյանցի Երուսաղեմի միաբան Հակոբ Ջաբարյանց Շուշեցու «Պատմություն գավառին Արցախու» փոքրածավալ երկը⁷²:

Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ հատուկ տեղ է գրավում Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Մաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական

⁶⁴ Мирза Адигезаль-бек, ук. соч.: նրա բարգմանությունը, տես՝ Միրզա Աղիզոգալ-բեկ, «Որպեսուրինը խանացն Գանձակայ», Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4463:
⁶⁵ Мирза Джамаль, ук. соч.: также: Газета "Кавказ", Тифлис 1855, ном. 61, 62, 65, 67, 68, 69:
⁶⁶ Միր Մեհդի Խազանի «Քերար-ե Թարիխ-ե Ղարաբաղ», Աղբ. Հան., ԳԱ ձեռ. ֆոնդ, 5-518/ 11602:
⁶⁷ Ахмед-бек Деваншир, О политическом существовании Карабагского ханства, Шуша 1901:
⁶⁸ Ռ-գագուլի-բեկ Միրզա Ջամալովի, «Ղարաբաղ», Աղբ. Հան., ԳԱ, ձեռ. ֆոնդ, 4701/ 5224:
⁶⁹ Հասան Ալի խան Ղարաղաղի, «Ղարաբաղ», Աղբ. Հան., ԳԱ, փ. 1949 11844:
⁷⁰ Աբդու Սամեդ-բեկ Բահման Միրզա, «Շուքրյունամե», Աղբ. Հան., ԳԱ, ձեռ. արխիվ, փ. 3212: Այդ աշխատության մասին տես՝ А. Х. Аванков, Бахман-Мирза и его сочинение "Шукр-наме-ий Шахиншахи". Автореферат диссертации на соискание ученой степени кандидата ист. наук:
⁷¹ Г. Иманов, Вопросы историографии Азербайджана, Труды Азербайджанского филиала АН, т. 30, Баку 1936, с. 156:
⁷² Հակոբ Ջաբարյանց, «Պատմություն գավառին Արցախու», Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2734: Այդ ձեռագրի մասին տես Տիտանյան, «Նորահայտ նյութեր 1793-1795թթ Շուշիից իրիկի հերոսական պաշտպանության մասին, «Արարեր հասարակական գիտությունների», Երևան 1966, 9:

երկը, որը կարևոր սկզբնաղբյուր է մի շարք առումներով: Այն իր մեջ ներառում է պատմագրական հիշյալ խմբերին բնորոշ առանձնահատկությունները:

«Թարիխ-ե Մաֆի»-ում շարադրված է Ղարաբաղի Խամայի մելիքությունների, մահմեդական խանության և XIX դարի ռուս-պարսկական պատերազմների մանրամասն ու հավաստի պատմությունը: Անտեսված չեն տեղի հայ և քյուրթ բնակչության հիշյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր դեպքերը: Հեղինակը չի ջանացել խեղաթյուրել իրեն հայտնի փաստերը և չի պաշտպանել հակառակ կողմերից (Իրան և Ռուսաստան) որևէ մեկին: Ինչպես Իր երկի առաջաբանում է գրում, «Հանքի որ պատմական գրքերից մի քանիսում տուտ ճոռոմարանությունների հանդիպեցի, որոշ ընկերներս ցանկությամբ ու խորհրդով որոշեցի մի ճշմարիտ պատմություն գրել, որը գերծ կլիներ ավելորդ նկարագրություններից ու ստից»⁷³:

Միրզա Յուսուֆը, ի տարբերություն քրթազգի հեղինակների, բավականին ընդարձակ տեղ է հատկացնում Ղարաբաղի հայ մելիքությունների ու նրանց բնակչության պատմությանը վերաբերող հարցերի լուսաբանմանը:

«Թարիխ-ե Մաֆի»-ի ձեռագիրը բաղկացած է 148 բերբերից՝ գրված պարսկական գրություն անսրալիղ կոչված ձևով և ընթերցելի, գեղեցիկ ձևազարդ: Հեղինակը իր երկը սկսել է նարդկության մայապատմական շրջանից և հետագայ մինչև 1828թ:

Միրզա Յուսուֆ Ներսեսովի պատմագրական աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից. ներածություն, առաջաբան (մոդադանե), 9-ը գլուխներ (մադալե) և վերջաբան (խաթեմե)⁷⁴: Որպես Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության սկզբնաղբյուր արժեքավոր են «Թարիխ-ե Մաֆի»-ի VIII և IX գլուխները: Նրանց վերնագրերն են.

VIII «Հայոց բազավորության պատմությունից: Փանահ խանի և Վրաստանում տեղի ունեցած դեպքերի մասին»:

IX՝ «Ռուսաստանի մուտքը Կովկասյան տարածքներ, քաղաքների գրավումը և ղզըաշների դեմ մղած կռիվները»:

Հեղինակը, որպես բնիկ ղարաբաղցի, լավ ծանոթ էր իր ծննդավայրի ժողովրդական գրույցներին ու ավանդություններին, որոնք գրի է առել իր պատմագրական երկում:

Իր օգտագործած սկզբնաղբյուրներից Ներսեսովը հիշատակում է միայն Միրզա Մեհդի խան Աստարաբաղի «Թարիխ-ե Նադերի» երկը⁷⁵ և Մ. Չամչյանի «Հայոց Պատմությունը»⁷⁶: Սակայն աղբյուրագիտական համեմատությունը ցույց է տալիս, որ Ներսեսովը օգտվել է նաև Միրզա Աղիզոգալ-բեկի «Ղարաբաղ-նամե»-ից: Երկու պատմական աշխատություններն էլ ունեն համանման կառուցվածք և անդրադառնում են հիմնականում նույն հարցերին⁷⁷:

Բնագրերի համեմատությունից երևում է, որ Ներսեսովը խմբագրում է իր սկզբնաղբյուրների համապատասխան մասերը՝ գրի առնելով գուտ պատմական տեղեկությունները և հանելով ավելորդ նկարագրություններն ու բնարական զեղումները:

«Թարիխ-ե Մաֆի»-ն գերծ չէ նաև որոշ բերություններից: Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել XVIII դարի դեպքերի հաճախ ոչ ճիշտ թվագրումը: Այսպես, Ներսեսովը մշում է, որ Փանահ խանը Բայաթ ամրոցը հիմնադրում է 1162 թ. ք. (1749թ)⁷⁸, մինչդեռ պետք է լինի ամենաուշը 1161 թ. ք.⁷⁹, քանի որ 1749թ. այդ ամրոցը պաշարում են Շաքիի խանի զորքերը⁸⁰: Ավարիայի Օմար խանի 1785թ. արշավանքը նկարագրելու հիշատակում է 1205 թ. ք., (1790, 1791թ.)⁸¹:

⁷³ Ներսեսով, նվ. ձեռ., էջ 3ա:
⁷⁴ Արջաբանը, թե՛ ձեռքի տակ եղած բնագրի ֆոտոպատճենում բացակայում է:
⁷⁵ Ներսեսով, նվ. ձեռ., 37 ք:
⁷⁶ Ներսեսով, նվ. ձեռ. 81ա:
⁷⁷ հմմտ. Ներսեսով, նվ. ձեռ., էջ 77բ - 105բ և Мирза Адигезаль-бек, ук. соч., с. 57-96:
⁷⁸ Ներսեսով, նվ. ձեռ., էջ 82ա:
⁷⁹ Мирза Адигезаль-бек, ук. соч., с. 53.
⁸⁰ Левиатов, ук. соч., с. 121.
⁸¹ Ներսեսով, նվ. ձեռ., էջ 92 ա:

Առանձին դեպքերում նկատվում են որոշ իրադարձությունների հաջորդականության խախտումները⁸², որի պատճառը բերևս նրա օգտագործած սկզբնաղբյուրներում տեղ գտած համանման սխալներն են:

Հաճախ չեն համապատասխանում հեղինակի նշած իրադարձությունների հիջրերի լուսնային ու եկրոպական օրացույցների թվականները⁸³:

«Թարիխ-ե Սաֆի»-ի լեզուն գեղեցիկ է ու պարզ համեմված բազմաթիվ ասացվածքներով ու բանաստեղծական տողերով: Կարծում ենք, որ պատմագրական երկը որոշ չափով ծանրաբեռնում են ճակատամարտերի երկարատևությունները և նշանավոր անձանց՝ զորավարների, մեխիքների ու շահերի բնավորության բնութագրականները:

Հեղինակը չի խորշում քյուրբերեն ու ռուսերեն բառերի, տերմինների հաճախակի գործածությունից⁸⁴: Ներսեսովը գրի է առել նաև ռուսական անունների իրանականացված տարբերակները և նշանավոր անձանց տրված իրանական մականունները⁸⁵:

Երրորդ գլխում, որը կրում է «Ղարաբաղի XVIII դարի պատմությունը ըստ Մ. Յ. Ներսեսովի» «Թարիխ-ե Սաֆի»-ի, բննվում են պատմագրական երկի VIII գլխի հարդորումները Ղարաբաղի XVIII դարի պատմության վերաբերյալ:

Ներսեսովը արձանագրում է Հայոց արևելյան մահամզների որոշ տարածքների հայազրկման փաստը՝ նշելով, որ Արցախի հարթավայրային շրջանները անցյալում բնակեցված են եղել հայերով, որոնք քչնամական բանակների ու քոչվոր ցեղերի արշավանքների հետևանքով հայազրկվել են: Հեղինակը ցավով է խոսում այն մասին, որ զրկվելով իրենց նախկին բնակիչներից, Ղարաբաղի բնակավայրերի ու գյուղերի մի մասը իր ժամանակներում «ամայի ու աննշակ մնալով՝ ավերակների են վերածվել» և համոզաստուն են քոչվոր ցեղերի ժամանակավոր կացարանները⁸⁶:

Ամայացած բնակավայրերի թվում, որոնցից իր ժամանակներում պատմական հուշարձաններ ու հնույթյուններ էին պահպանվել, Ներսեսովը հիշատակում է Չառուզաբիլը⁸⁷, Սեիր կամ Սրի⁸⁸, Բարդախ⁸⁹ և Բարի⁹⁰ քաղաքները:

«Թարիխ-ե Սաֆի»-ում արժեքավոր տեղեկություններ կան XVIII-XIX դարերի փոքր Սյունիքի վարչական բաժանումների, այնտեղի հայկական բնակավայրերի ու քոչվոր ցեղերի մասին:

⁸² 1752թ. Վրաստանի թագավոր Հերակլի կողմից Ղարաբաղի, Գանձակի ու Ղարաղաղի խաների դավադրական կարանավորման հետ կապված դեպքերը նկարագրվում են 1757թ. տեղի ունեցած Մոհամմադ Հասան խան Քաջարի զարաբաղյան արշավանքից հետո, իսկ Ավարիայի Օմար խանի 1785թ. դեպի Վրաստան ու Երևանի խանություն կատարած արշավանքը՝ 1791թ. Իբրահիմ խանի զորքերի Նախիջևան ներխուժելուն վերաբերող դեպքերից հետո:

⁸³ Այսպես Բայաթի ամրոցը, ըստ Ներսեսովի, հիմնադրվել է 1162/1752թ (Ներսեսով, նշվ. ձև., էջ 82 ա) մինչդեռ 1162 հ. թ. համապատասխանում է 1749 թվականին: Թարանկյուտի ամրոցը՝ 1165/1755թ. (Ներսեսով, նույն տեղը) մինչդեռ 1165 հ. թ. հնչալու. 1751/1752 թվականներին և այլն:

⁸⁴ Հեղինակի խոսքում տեղ են գտել նաև բազմաթիվ ռուսական բառեր և տերմիններ, ինչպիսիք են «աղղաք» (ռուս. - "солдат"), «վարս» (ռուս. - версты); «չենիք» (ռուս. - Шеренга); «բլանչի» (ռուս. - «плам») բառի բուրբաքցված տարբերակը, «եներալ» (ռուս. - «генерал») և այլն:

⁸⁵ «Փշրախոյար» (Յիցիանովի մականունը, որը ռուս. «инспектор» բառի ազգավորված ձևը), «ղրզը-այլաղ» (թրք. - «կարնըրատ»), Վ. Չուրովի մականունը, որ տրվել էր նրան արևեստական ուսր ունենալու պատճառով:

⁸⁶ Ներսեսով, նշվ. ձև., էջ 76թ

⁸⁷ Չառուզիբիլը հայոց Շար գավառի ու նրա Տպել կոչվող բնակավայրի (տե՛ս՝ Հակոբյան, Ա. Հ., Միմոնյան, Հ. Ե., Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հանրը, Պատմա-բանասիրական հանդես, Ե. 1998, Ծ1-2, էջ 231) աղավաղված ձևն է՝ որը XVII-XVIII դարերում հիշատակվում է, որպես ամբողջ գավառի անվանում, իսկ հետագայում տեղայնացվում մեկ բնակավայրի վրա:

⁸⁸ Ներսեսովը, այսպիսով Միլ քաղաքը նույնացնում է Մ. Կադանկատվազու նիշատակած Միիրավան քաղաքի հետ, որը Ռուտիք նահանգում հիմնում է Սասանյան Խուրով շահի տոհմից Աղվանքի մարզպան նշանակված Միիրը (տե՛ս՝ Մովսես Կապանկատվազի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե. 1969, էջ 133):

⁸⁹ Ղևոնդ Ալիշանը հիշատակում է Պապի անունով գյուղ ու ամրոց Դիզակի շրջանում Չերեքեն գետի ափին, (Ալիշան, Արցախ, էջ 121):

⁹⁰ Ներսեսով, նշվ. ձև., էջ 76ա-բ

Ներսեսովի վկայությունները Ավան յուզբաշու գլխավորած ազատագրական կռիվներին ու մասնավորապես Չավնդուրի մտատակայքում օսմանյան 7000-ամոց զորքի դեմ տարած հաղթական ճակատամարտի մասին նոր մանրամասներով լրացնում և հաստատում է այդ շրջանի Սյունիքի ու Ղարաբաղի ազատագրական կռիվների պատմության մեզ հայտնի տվյալները: Այն տեղի է ունեցել 1724թ., երբ օսմանյան զորքերիը արշավում են դեպի Անդրկովկասյան տարածքներ երկու ուղղություններով՝ Թբիլիսի-Գանձակ-Ղարաբաղ և Երևան-Խոյ-Թավրիզ⁹¹: XVIII դարի 20-ական թթ. Սյունիքի և Արցախի ազատագրական պայքարի պատմությանը վերաբերող փաստագրական նյութերում հիշատակություն կա այն մասին, որ 1724թ. գարնանը Ղարաբաղի տեղախները Ավան յուզբաշու և Իվան Կարապետի գլխավորությամբ 2000 մարդկանցով օգնության էին գնացել դափանցիներին՝ նրանց իսկ խնդրանքով⁹²:

Ներսեսովը ամերմաման ու կարևոր վկայություններ է տալիս Խամսայի մեխիքությունների տարածային ընդգրկումների վերաբերյալ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ճշգրտել XVIII-XIX դարերում արցախահայության բնակության շրջանները: «Թարիխ-ե Սաֆի»-ի տեղեկությունների շնորհիվ հայտնի է դառնում, որ Դիզակի մեխիքության տարածքը ձգվում էր Հազարա գետից ու նրա աջ ափին գտնվող Մալ-բափե⁹³ ջրից մինչև Քյուղայան գետը ու նրա ձախ ափին գտնվող Գյուլ-բափե վայրը⁹⁴, և Արաբից մինչև Խորհատ լեռ⁹⁵: Վարանդայի մեխիքության սահմանները հասնում էին մինչև արևելքում Քիրս լեռը, արևմուտքում՝ Ալի Բալի հովիտը⁹⁶, հարավում՝ Խորհատ լեռը, իսկ հյուսիսում՝ Գարգառի հարավային Շուշիքենդ ու Խալխալու վտակները: Խաչենի մեխիքությունը տարածվում էր Ղըրի-Ղըզ⁹⁷ ու Միխրություն լեռնաշղթաներից⁹⁸ մինչև Բայաթի նախկինում անտառային, իսկ այժմ մարգագետնային հողերը⁹⁹ և Գարգառից մինչև Կավարտ (Ղարաբաղ) գետակի¹⁰⁰ հովիտը: Որպես Ջրաբերի մեխիքության սահմաններ, հեղինակը հիշատակում է՝ Կավարտ ու Թարբառ գետերը, Ղըրի-Ղըզի լեռնաշղթան և Բայաթի ու Բարդաղի շրջակա տարածքները: Իսկ ամենահյուսիսային Գյուլիստանի մեխիքությունը, ըստ «Թարիխ-ե Սաֆի»-ի, ձգվում էր Մալի ու Գյուլիստանի լեռներից մինչև Կոր գետը և Թարբառից մինչև Գերան-չալ գետը¹⁰¹:

Պարսկական պետության քուլագման ու նրա գահին հավակնողների միջև երկարատև գահակալական կռիվների հետևանքով, Անդրկովկասի ու Ատրպատականի տարածքներում 1747թ. հետո անկախություն են ստանում և ստեղծվում հետևյալ պետական կազմավորումները՝ Վրաստանի թագավորությունը, Երևանի, Նախիջևանի, Մակվի, Ղարաղաղի, Ռիմիայի, Գանձակի, Կուբայի, Բարվի, Շիրվանի, Շարիի, Թալիշի, Արդեբիլի, Մարաղայի, Մովուդ-Բուլաղի և Ղարաբաղի խանությունները¹⁰²: Խանություններից շատերի համար (Նախիջևանի, Խոյի, Արդեբիլի, Ղարաղաղի և այլն) հիմք են ծառայում ժառանգական հողատիրությունները: Սեֆյան Պարսկաստանի տիրապետության

⁹¹ Арутюнян, ук. соч., с. 167, 168.
⁹² Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե. 1953, էջ 82:
⁹³ Карта Закавказского края до 1917г.- см. к. Маль-тапа.:
⁹⁴ Карта Кавказского края с показанием густот населення, Баку, 1908, см. п. Гюльтапийский...
⁹⁵ Карта Закавказского края..., см. г. Кургат.
⁹⁶ Карта J-38-11-6, (Մարտունի) изд. 1973.
⁹⁷ XIX դարում նույն անունով է կոչվել Ղարաբաղյան լեռնաշղթայի Ղըզ-ղալ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք մինչև Խաչենագետի ակունքները ձգվող հատվածը (տե՛ս Ա. Կ. Артамопов. Персия как наш противник в Закавказье, Т. 1889, с. 105. Карта Закавказского... Карта Кавказского края...)
⁹⁸ Միխրություն լեռնաշղթան կազմում է Թարբառ և Հազարի գետերի ջրբաժանը և լեռների գծով միանում Ղարաբաղի լեռնաշղթային: Միխրության լեռնաշղթային է պատկանում Միխրությանը լեռը, որն ունի 3411մ բարձրություն:
⁹⁹ Советский Азербайджан, Баку, 1958, с. 38.
¹⁰⁰ Վարբառ (կամ Կավարտ) գետակը հոսում է Խաչենագետի ու Թարբառի միջև ընկած տարածքով (տե՛ս՝ Карта Закавказского края..., см. р. Кабарты., Ալիշան, Արցախ, էջ 73):
¹⁰¹ Ներսեսով, նշվ. ձև., էջ 78ա-79ա:
¹⁰² Петрушевский, ук. соч., с. 86.

ժամանակաշրջանում Ղարաբաղի շրջանի (վիլայեթի) մեջ էին մտնում բացի Գանձակի *Չիաղողի Ղաջարական* ցեղի բեզլարբեզիների տիրույթներից (Գանձակ քաղաքի շրջակա տարածքը) նաև մի շարք այլ ցեղերի և հայ մելիքների ժառանգական տիրույթները: XVI դարից Ղարաբաղյան հարթավայրի և Բարդաղից հարավ ընկած տարածքը պատկանում էր *Օրուզիքի* (թրք. 32) արհեստական ցեղային միությանը, որի մեջ մտնող *Ջևանշիր* ցեղի առաջնորդը համարվում էր ամբողջ *Օրուզիքի* միության ցեղապետը¹⁰³: XVIII դարի կեսերին *Օրուզիքի* ցեղային միությունը Ղարաբաղում փաստորեն առավել ուժեղ լինելով կարողանում է իր տիրապետությունը հաստատել գրեթե ողջ Ղարաբաղի վիլայեթի (բացառությամբ Ղազախի, Շամշադինի և Գանձակի շրջանների) վրա: Ներսեսովը իր «Թարիխ-ե Սաֆի» երկում հաստատում է այս միտքը՝ խոսելով Փանահ խանի ծագումով *Ջևանշիր* ցեղից լինելու և նրա տոհմի ժառանգական տիրույթների մասին¹⁰⁴, որոնք գտնվում էին Աղղամի մուտակայքում¹⁰⁵ և որտեղ նա կառուցում է իր երկու բերդերը (Բայաթը և Շահբուլաղը):

«Թարիխ-ե Սաֆի»-ում նկարագրվում են հայ մելիքների և Ղարաբաղի մահմեդական խաների միջև մղված համառ պայքարի պատմության առաջնից ղրվագներ: Ներսեսովը իրավացի կերպով առաջինը հիշատակում է Փանահ խանի կողմից Ջրաբերդի Ալլահ Ղուլի սուլթանի սպանության մասին¹⁰⁶: Սկզբնաղբյուրներից մեկում նշվում է նրա սպանության 1749 թվականը¹⁰⁷, որը մեզ հավաստի է թվում, քանի որ կապվում է 1748թ. Փանահ խանի և Շաքրիի Հաջի Չելեբի խանի միջև տեղի ունեցած ընդհարումների հետ: Այդ կռիվներում Գյուլիստանի Մելիք Յուսուբը և Ջրաբերդի Մելիք Ալլահ Ղուլի սուլթանը վերջինիս դաշնակիցներն էին¹⁰⁸:

Ներսեսովի տեղեկությունները Խաչենի մելիքների դեմ պայքարի հանգամանքների մասին¹⁰⁹ հաստատվում են այլ աղբյուրների հաղորդումներով:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ներսեսովի նշած Խաչենի Մելիք Ուլուբաբի բոլոր, որը ամբանալով Բալլուդյան բերդում, համառ պայքար է մղում Փանահ խանի զորքերի դեմ, Հասան-Ջալալյան Մելիք Ալլահվերդին էր¹¹⁰:

Փանահ խանի պայքարը Խաչենի Մելիք Ալլահվերդիի դեմ տևում է մինչև 1754/1755թ.¹¹¹ և ավարտվում, ինչպես նշում է Ներսեսովը, վերջինիս սպանությամբ և տեղի հայության հնազանդեցմամբ:

Փանահ խանի զորքերին համառ դիմադրություն են ցույց տալիս Ջրաբերդի սպանված Ալլահ Ղուլի սուլթանի եղբայր Աբասը և Գյուլիստանի Մելիք Հովսեփը: Ներսեսովը իրավացիորեն նշում է, որ այդ պայքարը տևում է շուրջ 4-5 տարի, որի ընթացքում խանը բազմիցս հարձակվում է նրանց ապաստարանը դարձած Ջերմուկ ամրոցի վրա, սակայն չի կարողանում գրավել¹¹²: Վերոհիշյալ մելիքների Փանահ խանի դեմ մղած երկարատև պայքարը, որի առաջին փուլը շարունակվել է մինչև 1755թ., նկարագրվում է այդ շրջանի նաև այլ սկզբնաղբյուրներում¹¹³: Ներսեսովը կռիվների ընթացքում մելիքների տնտեսությանը

¹⁰³ Петрушевский, ук. соч., с.134-136.
¹⁰⁴ Ներսեսով, 81ա:
¹⁰⁵ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 81ա:
¹⁰⁶ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 83 ա:
¹⁰⁷ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 396:
¹⁰⁸ Բաֆիի, նշվ. աշխ., էջ 194:
¹⁰⁹ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 83 ա:
¹¹⁰ Բաֆիի, նշվ. աշխ., էջ 201: Համաձայն Արցախի վիճագրական նյութերի Հասան-Ջալալյանների տոհմից սերած այդպիսի մարդ իրոք եղել է XVIII դարում (Դիվան իսլա վիճագրության, պրակ 5, Արցախ, էջ 69): Բացի այդ գոյություն ունի 1728թ. մի քյուրթերեն հրովարտակ, որը Ղարաբաղը նվաճած քուրթ զորավար Մուստաֆա խանը Խաչենի մելիք է նշանակում Ալլահվերդիին (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվ., թղթ. շք. վավ. 169):
¹¹¹ Վ. Օձնեցի, նշվ. ձեռ., էջ 62: Կա նաև Փանահ խանի կողմից Մելիք բեկ Հասան-Ջալալյանին Խաչենի մելիքության հանձնակատար նշանակվելու 1754/1755 թ. քաղիղը (Մ. Մատենադարան, կաթոց. դիվ., թրք. շք. վավ. 205):
¹¹² Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 83 բ:
¹¹³ Մելիքսեբ-բեկ, նշվ. աշխ., էջ 107:

հասցված ծանր վնասներով էր բացատրում նրանց ժամանակավորապես հեռանալը Ղարաբաղից¹¹⁴, որը հաստատում են վրացական աղբյուրները¹¹⁵:

Հեղինակը նոր փաստեր է հաղորդվում Դիզակի Մելիք Եսայու՝ Փանահ խանի դեմ մղած կռիվների վերաբերյալ: Ըստ Առ. Կոստանյանցի Փանահ խանի ու Մելիք Եսայու միջև կռիվները տևում են 7 տարի¹¹⁶: Միզգա Յուսուֆը իր պատմագրական երկում համառոտ նկարագրում է այդ երկարատև կռիվներից մի դրվագ, որում Փանահ խանը ծանր պարտություն է կրում: Իր գորքը կորցրած խանը փախչում է Բայաթի կողմերը և մեկ ամիս անպատանամտ այնտեղի ամուսնանում: Ի վերջո Շաքրիի Հաջի Չելեբի խանի օգնությամբ նա նոր գորք է հավաքում¹¹⁷ ու նորից պատերազմի էլնում: Բայց շուտով հաշտություն է կնքվում նրա և Դիզակի մելիքի միջև¹¹⁸: Հաջի Չելեբին մահացել է 1755թ.¹¹⁹, ուստի նկարագրվող դեպքերը տեղի են ունեցել մինչև այդ թվականը:

Ներսեսովը արժեքավոր փաստեր է արձանագրում Շուշի քաղաքի հիմնադրման, կառուցման, նրա բնակչության կազմի փոփոխությունների պատմության վերաբերյալ¹²⁰: Նրա վկայությունները հաստատում են Իբրահիմ խանի կողմից 80-ականների վերջին բերդապարիսպների վերակառուցմանը վերաբերող տեղեկությունները¹²¹: Հեղինակը արձանագրում է այն կարևոր փաստը, որ բեկ սկզբնական շրջանում մեծ թիվ էին կազմում քաղաքի մահմեդական բնակիչները, սակայն հետագայում հետզհետե ավելանում է հայ բնակչությունը: Այնպես, որ հեղինակի օրոք, 1855թ. արդեն քաղաքի բնակչության 2/3-ը կազմում էին հայերը, իսկ 1/3-ը շիա-մահմեդականները¹²²:

Ներսեսովի հաղորդումները հանգամանալից տեղեկություններ են պարունակում Ղարաբաղի խաների վարած արտաքին քաղաքականությանը և օտար նվաճողների դեմ նրանց պայքարի վերաբերող հարցերի շուրջ: Հեղինակը հետաքրքրական մանրամասներ է հաղորդում 1748թ. Շաքրիի Հաջի Չելեբի խանի դեմ Փանահ խանի մղած պայքարի, 1752թ. Վրաստանի ու Արևելյան Անդրկովկասի մի շարք խաների այդ թվում նաև Ղարաբաղի տիրակալի միջև տեղի ունեցած ռազմական ընդհարման, ինչպես նաև Ղարսկաստանի գահին հավակնորդներից 1757/1758թ. Մոսհամմադ Հասան խան Ղաջարի, 1762թ. Ուրմիալի Ֆաթհալի խան Աֆշարի, Աղա Մոսհամմադ խան Ղաջարի 1795թ. և 1797թ. դարաբաղյան արշավանքների վերաբերյալ¹²³: Առանձին դեպքերում եզակի այդ մանրամասները ոչ միայն ճշգրտում այլև հարստացնում են տվյալ ժամանակաշրջանի պատմությունը:

«Թարիխ-ե Սաֆի»-ում հավաստի տեղեկություններ կան Փանահ խանի օրոք հարևան խանությունների հաշվին Ղարաբաղի տարածքային ընդարձակման և այդ խանություններից որոշ քոչվոր ցեղերի՝ մասնավորապես Երևանի խանությանը հպատակ *Քղլանիների*, Վրաստանին հպատակ *Ջինի ու Դեմիրչի-հասանլու* ցեղերի և Նախիջևանի *Քենգերլու* ցեղերի այստեղ գաղթեցնելու վերաբերյալ¹²⁴: Պատմական աղբյուրները հաստատում են «Թարիխ-ե Սաֆի»-ի տվյալները այն մասին, որ 50-ական թվականներին Փանահ խանը կողմից Սյունիքի Մեղրիի, Տաթևի, Միսիանի, Չանգեզուրի ու Ղախանի մահալների նվաճումը,

¹¹⁴ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 83 բ:
¹¹⁵ Մելիքսեբ-բեկ, նշվ. աշխ., էջ 109:
¹¹⁶ Նիբեր հայ մելիքությունների մասին, պրակ Ա, էջ 44:
¹¹⁷ XVIII դարի 50-ականների սկզբին Վրաստանի դեմ պայքարում Շաքրիի Հաջի Չելեբի խանը հաճախ էր դաշնակցում Փանահ խանի հետ (տես՝ Մելիքսեբ-բեկ, նշվ. աշխ., էջ 131, 137), այնպես որ գայրմանով չէ նրա աջակցությունը Դիզակի մելիքի դեմ պայքարում:
¹¹⁸ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 83 ա:
¹¹⁹ Левиатов, ук. соч., с. 125.
¹²⁰ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 85բ-86բ:
¹²¹ Армяно-русские отношения..., т. 4, с. 252
¹²² Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 86բ:
¹²³ Ներսեսովը՝ ինքը հիշատակում է միայն Աղա Մոսհամմադ խանի արշավանքների թվականները, իսկ մյուսներինը պարզ է դառնել այդ ժամանակաշրջանի մյուս սկզբնաղբյուրների հետ համեմատության շնորհիվ:
¹²⁴ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 84 բ):

որոնք նախքան այդ մտնում էին Նախիջևանի, Ղարաղաղի ու Երևանի խանությունների մեջ¹²⁵։

Պատմական սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան XVIII դարում *Քղանի* ցեղի Երևանի խանությունում բնակվելու վերաբերյալ¹²⁶։ *Դեմիրչի-հասանլու* ցեղը հիշատակվում է XVIII դարում Վրաստանին հպատակ ցեղերի թվում, որոնք բնակվելով Ղազախում հաճախ զինվորներ էին մատակարարում վրացական բանակին¹²⁷։ Իսկ *Քենգերլու* ցեղը, որ պատկանում էր *Ղզրաշ* ցեղերի թվին, հիմնականում բնակվում էր Նախիջևանում, որը այդ ցեղի ցեղապետերի ժառանգական օլթան էր¹²⁸։ *Քենգերլու*, *Դեմիրչի-հասանլու*, *Քղանի* և մյուս ցեղերի ներկայությունը Ղարաբաղի ու Անդրկովկասի մյուս գավառների XIX դարի բնակչության կազմում հաստատում է հեղինակի վկայությունը հարևան խանություններից նրանց բերված լինելու մասին¹²⁹։

Ներսեսովի նշված արժեքավոր վկայությունը, որը մատնանշում է խանության շրջանում տեղի մահմեդական բնակչության թիվը ավելացնելու նպատակով Ղարաբաղի խաների ձեռնարկած միջոցառումների փաստը, ևս մեկ անգամ հաստատում ու լրացնում է Ամենո-բեկ Ջևանշիրը։ Ըստ նրա, բացի նշված ցեղերից՝ Ղարաբաղի խաները իրենց երկիրն են գաղթեցնում նաև *Փյոսյան*, *Սաֆի-բյուրդ*, *Ղրզրլ-հաջիլի*, *Բոյ-ահմեդլի*, *Սասարի* և մյուս ցեղերը¹³⁰։

Արժեքավոր են «Թարիխ-ե Սաֆի»-ի եզակի տեղեկությունները հարևան խանությունները իրեն ենթարկելու նպատակով 1787թ. Իբրահիմ խանի դեպի Նախիջևանի և 1788թ. դեպի Խոյի խանություն կատարած արշավանքների վերաբերյալ¹³¹։

Չորրորդ գլուխը, որը վերնագրված է «XIX դարի ռուս-պարսկական ընդհարումների պատմությունը «Թարիխ-Սաֆի»-ում, բաղկացած է 2 մասերից։ 1 մասում քննվում են «Թարիխ-ե Սաֆի» վկայությունները 1804-1813թթ. պատերազմի իրադարձությունների ու խաղաղության տարիներին (1813-1826թթ.) ռուս-իրանական փոխհարաբերությունների առանձին հարցերի շուրջ։ Դրանց հիման վրա կարելի է որոշ ճշգրտումներ մտցնել ու լրացնել Ռուսաստանի Անդրկովկաս ներքափանցելու և, Իրանի դեմ այդ պատճառով բռնկված պատերազմների պատմությունը։

Ներսեսովի պատմագրական երկի IX գլխում շարադրված է XIX դարի սկզբին տեղի ունեցած 2 ռուս-պարսկական պատերազմների (1804-1813թթ., 1826-1828թթ.) հավաստի ու հանգամանակից պատմությունը¹³²։ Հայազգի հեղինակը մանրամասն պատմում է Ղարաբաղում ու հարակից տարածքներում տեղի ունեցող գրեթե բոլոր կարևոր ռազմական իրադարձությունների մասին։

Հեղինակը, 1801-1828թթ. գտնվելով Իրանում ու վարելով պարսիկ բարձրաստիճան պաշտոնյայի գրագրի պաշտոնը, տեղյակ էր երկու նաև երկրների միջև ընթացող քաղաքական պայքարին ու դիվանագիտական վեճերին։ Ներսեսովի անաչառ վերաբերմունքը հակամարտ կողմերի քայլերի ու ձեռնարկումների վերաբերյալ, խիստ բարձրացնում են նրա հաղորդումների գիտական արժեքը։ Դրանք հնարավորություն են տալիս ինչպես ճշգրտելու պարսկական աղբյուրների վկայությունները, այնպես էլ լրացնելու ռուսական աղբյուրներինը՝ իրենց նոր ու միայն իրանական կողմին հայտնի տվյալներով ու փաստերով։

¹²⁵ Нерсисян, ук. соч., с. 265; Бахьянов, ук. соч., с. 128; Армяно-русские отношения, т. 4, Е. 1990, с. 213. Չամչյանի նշվ. աշխ., հ. 9, էջ 848։

¹²⁶ Симеон Ереванци, Джамбур, М. 1958, с. 106. Шопен, ук. соч., с. 318.

¹²⁷ Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 132, 140։

¹²⁸ Петрушевский, ук. соч., с. 127.

¹²⁹ Описание Карабагской провинции... владения Мехди Кули хана; Свод статистических данных, Елисаветпольская губерния.

¹³⁰ Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Баку АН АЗССР, инст. ист., 1961, с. 71.

¹³¹ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 91ա-92ա։

¹³² Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 102ա-149ա։

«Թարիխ-ե Սաֆի»-ում հեղինակն անդրադառնում է 1805թ. Ղարաբաղի խանության Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուն, պարսկական բանակի նրա տարածքը ներխուժելուն և տեղի ունեցած ռազմական ընդհարումներին։ Ներսեսովի վկայությունները 1806թ. Ղարաբաղի Իբրահիմ խանի ռուսների նկատմամբ դավաճական դիրքորոշում ունենալու մասին հաստատում են ժամանակի թե՛ պարսկալեզու պալատական պատմագիրները¹³³ և թե՛ ռուսական աղբյուրները¹³⁴։

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի եզրափակիչ փուլում տեղի են ունենում երկու խոշոր ճակատամարտ, որոնցից 1-ինում՝ 1812թ. փետրվարին Մուլբանուտում ռուսները պարտություն են կրում, իսկ ԻI-ում՝ 1812թ. հոկտեմբերին Ալվանդուզում խոշոր հաղթանակ տանում, որն էլ կանխորոշում է պատերազմի ելքը։ Իր երկու տալով այդ երկու կարևոր իրադարձությունների նկարագրությունը՝ Ներսեսովը հաղորդում է որոշ հետաքրքրական մանրամասներ դրանց վերաբերյալ¹³⁵։ Չնայած որ այդ իրադարձությունները մանրամասն ու հավաստի նկարագրված են ռուսական աղբյուրներում¹³⁶, այնուամենայնիվ հեղինակի հաղորդումները Մուլբանուտի և Ալվանդուզի մարտերի ընթացքի մասին պարունակում են նոր մանրամասներ։

Ներսեսովի երկում բացակայում է 1807-1811թթ. ժամանակահատվածում Ղարաբաղում ընթացող դեպքերի մասին, երբ պարսկական զորքերը մի շարք հաբձակումներ են գործում և ասպատակում այնտեղի բնակավայրերը։

Հեղինակը անդրադառնում է խաղաղության տարիներին (1813-1826թթ.) Պարսկաստանի ու Ռուսաստանի փոխհարաբերությունների խնդրին՝ նկարագրելով այդ շրջանում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ¹³⁷։ Ներսեսովի մեկնաբանությունները դրանցից մի քանիսը՝ մասնավորապես Անդրկովկասի կառավարչապետ Մ. Երանդովի դեպքում Իրան այցելելու, Արաքսի ափին Վ. Մադաթովի ու քազաժառանգ Աբբաս Սիրզայի միջև տեղի ունեցած հանդիպման նպատակների վերաբերյալ հավաստի են և վկայում են հեղինակի քաղաքական լավատեղյակության մասին։

Չորրորդ գլխի 2-րդ մասում աղբյուրագիտական վերլուծության են ենթարկվում «Թարիխ-ե Սաֆի»-ի վկայությունները 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի դեպքերի մասին և դրանց հիման վրա լրացումներ ու ճշգրտումներ են կատարվում այդ շրջանի պատմության մեջ։

Ներսեսովը համակողմանի քննության է ենթարկում այդ պատերազմի բռնկման դրդապատճառները և նախադրյալները։ Նա իրավացի կերպով այդ դրդապատճառների շարքում է դասում Անդրկովկասի վիճելի տարածքների շուրջ ստեղծված լարված քաղաքական դրությունը, Անգլիայի օգնությունը Իրանին ու սաղրանքները, հյուսիսային Կովկասի մահմեդականների շրջանում շարունակվող ընդվզումները¹³⁸, մահմեդական հոգևորականության իրադրումները և Ռուսաստանում կայսերի փոփոխության հետևանքով¹³⁹ այնտեղ ստեղծված անկայուն իրավիճակը¹⁴⁰։

Պարսկաստանի քազաժառանգ Աբբաս Սիրզան դեռևս ռուս-պարսկական 1803-1814թթ. պատերազմի տարիներին սկսում է եվրոպացի մասնագետների օգնությամբ վերապատրաստել պարսկական բանակը, որը շարունակվում է նաև հետագա խաղաղության

¹³³ Ռեզակովի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., էջ 421։

¹³⁴ АКАК, т. 2, л. 1480, с. 722. Порта, ук. соч., т. 1, вып. 3, с. 340.

¹³⁵ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 118ա-բ։

¹³⁶ Порта, ук. соч., т. 1, вып. 3, с. 480; Утверждение..., т. 2, с. 460..

¹³⁷ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 119ա-բ, 120ա-բ։

¹³⁸ Ներսեսովի հիշատակած կրոնական պատերազմը ծագել էր դեռ 1823թ., և նրա դեկավարներից էր Մուլա Մուհամմեդը, որի ծածկանունն էր Ղազի Մուլա։ 1825թ. կրոնական (ջիհադի անվան տակ) հողի վրա Հյուսիսային Կովկասում ծագած ապստամբությունները մանրամասն նկարագրվում են ռուսական աղբյուրներում, (տես՝ АКАК, т. 6, ч. 2, л. 895, с. 510, Н. Дубровин, ук. соч., т. 6, СПб 1886, с. 524).

¹³⁹ Ռուս-չլկան աղբյուրները ևս հաստատում են այդ իրադարձությունների մասին Պարսկաստանում ուղեւցված լրերի տարածման փաստ, (տես՝ АКАК, т. 6, ч. 2, л. 610, с. 337).

¹⁴⁰ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 120ա-բ։

ժամանակամիջոցում¹⁴¹: Խաղաղության տարիներին Անգլիայի կողմից Պարսկաստանին ցուցաբերած օգնության մասին տեղյակ էր նաև ռուսական կառավարությունը¹⁴²:

«Թարիխ-ե Սաֆի»-ն մանրամասն ու արժեքավոր տվյալներ է պարունակում Ռուսաստանին պատկանող անդրկովկասյան տարածքներ ներխուժած պարսկական բանակի կազմի ու կառուցվածքի, նրա առանձին զորամիավորումների ու դրանց հրամանատարների վերաբերյալ, որոնք բացակայում են ռուսական աղբյուրներում:

Ներսեսովը իր վերադաս Ամիր խան սարդարի հետ մասնակցում էր պարսկական զորքերի դարաբաղյալ արշավանքին, ուստի «Թարիխ-ե Սաֆի»-ի եզակի տեղեկությունների շարքին են պատկանում վերոհիշյալ պարսիկ զորավարին ու Ղարաբաղի նախկին խան Սեհդի Դուլիին տրամադրված պարսկական զորքի ռազմական գործողություններին վերաբերող տվյալները¹⁴³:

Պատմագրական երկում իրենց արտացոլում են գտել ինչպես արցախահայության անձնագոհ պայքարը պարսից զորքերի դեմ, այնպես էլ տեղի մահմեդականների դավաճանությունը, որոնք միանալով Ղարաբաղ ներխուժած պարսկական զորքերին՝ իրենց զենքերն ուղղում են տեղի ռուսական զորագնդի ու նրան միացած հայ ազգաբնակչության դեմ: Նրանք իրենց նախկին խանի գլխավորությամբ ոչ միայն կռվում էին ռուսական զորքի դեմ, այլև մեծ վնասներ են հասցնում իրենց հայրենի Ղարաբաղին՝ ավերելով նրա բնակավայրերը¹⁴⁴:

Ներսեսովը իր աշխատությունում ներկայացնում է Աբբաս Միրզայի ծրագրերը պատերազմի սկզբնական շրջանում նախատեսվող ռազմական գործողությունների վերաբերյալ և դրանց ձախողման պատճառները: Ծանոթ լինելով իր վերադասի նամակագրությանը՝ հեղինակը իր երկում գրի է առել նրա և բազաժառանգի մի քանի նամակների պատճեններ¹⁴⁵, որոնք հստակ պատկերացում են տալիս պարսկական կողմի պլանների ու դրանց հետագա փոփոխությունների մասին:

«Թարիխ-ե Սաֆի»-ում գտնում ենք 1826թ. հուլիս-օգոստոս ամիսներին պարսկական բանակի ու ապստամբած մահմեդականների կողմից Շուշիի պաշարման մանրամասն ու բովանդակալից նկարագրությունը¹⁴⁶: Հեղինակը հավաստի տեղեկություններ է հաղորդում պարսկական ուժերի Ղարաբաղում ձեռնարկած մարտական գործողությունների և Շուշիի շուրջ ծավալվող դեպքերի մասին:

Ներսեսովը շեշտում է հայերի դերը Շուշիի պաշտպանության հարցում: Քաղաքի պարիսպների վրա ռուսների հետ կողք-կողքի կռվում էին պարսիկների դեմ ոչ միայն տեղի հայերը, այլև հարևան գյուղերի բնակիչները: Հեղինակը հատկապես մատնանշում է Շուշիքենդ ու Դաշ-ալթը-լու (Քարինտակ) գյուղերի բնակչության մասնակցությունը Խազնդարասի ձորի արաղացների պաշտպանության գործում¹⁴⁷: Այդ ձորում գտնվող արաղացների պաշտպանության համար Սաֆար յուզբաշու գլխավորությամբ տեղի հայերի մղած անձնագոհ կռվի մասին հիշատակվում է նաև ռուսական փաստաթղթերում¹⁴⁸:

«Թարիխ-ե Սաֆի»-ում արտացոլված է պարսիկ իշխանավորների ու զորքի ազատությունը, որոնց գլխավոր նպատակը Ղարաբաղի ու Շուշիի հարստությունները կողոպտելն էր¹⁴⁹: Ժամանակի մյուս սկզբնաղբյուրները հաստատում են, որ պարսիկ զինվորների եկամտի գլխավոր աղբյուրը հակառակորդ կողմի բնակավայրերի կողոպուտն

¹⁴¹ Հակոբյան, նշվ. աշխ., էջ 374:

¹⁴² АКАК, т. 6, ч. 2, с. 178.

¹⁴³ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 124ա-126ա:

¹⁴⁴ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 125բ, 126ա, 127ա, 131բ

¹⁴⁵ Աբբաս Միրզայի պատասխան նամակը Հուսեյն խան սարդարի դիմումին՝ (Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 129ա),

Աբբաս Միրզայի նամակը Ամիր խան սարդարին, (Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 134ա) և այլն

¹⁴⁶ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 129բ-131բ:

¹⁴⁷ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 131բ:

¹⁴⁸ Кавказский сборник, т. 24, с. 88, 93.

¹⁴⁹ Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 130 բ:

էր¹⁵⁰: «Թարիխ-ե Սաֆի»-ում պատկերված է նրանց անկարգապահությունը, որն էլ պարսկական զորքի պարտության գլխավոր պատճառն էր: Իրենց վերադասի հրամանին չենթարկվելը սովորական երևույթ էր պարսից զորքի ու նրա ղեկավարների համար: Մասնավորապես, ըստ Ներսեսովի, բազաժառանգի հրահանգները հրաժարվում է կատարել Ամիր խան սարդարը¹⁵¹:

Պատմագիտական բարձր արժեք ունեն «Թարիխ-ե Սաֆիի» այն մասերը, որտեղ հեղինակը որպես ակնատես պատկերում է Ամիր խան սարդարի զորագնդի հանդիսավոր մուտքը Գանձակ և Շամխորում տեղի ունեցած ճակատամարտը: Ներսեսովի վկայությունների շնորհիվ հայտնի է դառնում, որ Գանձակ ժամանած Ամիր խան սարդարին հպատակություն հայտնելու են գալիս տեղի գրեթե բոլոր մահմեդական ցեղերի առաջնորդները: Պարսիկներին խոհեմաբար հնազանդություն են հայտնում նաև Գանձակ քաղաքի հայկական Քիլիսաբենդ թաղամասի հայերը, որոնք այդ կերպ խուսափում են կոտորածներից¹⁵²:

Ըստ Ներսեսովի, բազաժառանգը իմանալով Մաղաթովի ժամանելու մասին, Ամիր խան սարդարին կարգադրում է ամրանալ Գանձակի բերդում և այնտեղ պաշտպանվել ռուսական զորքերի հարձակումներից: Հայ պատմագրի այս վկայությունը գալիս է հերքելու ռուսական աղբյուրների պնդումները պարսկական կողմում գործողությունների միասնական ընդհանուր ծրագրի բացակայության մասին¹⁵³: Հայտնի չէ, թե ինչպես կարգանային դեպքերը, եթե Ամիր խանը ենթարկվեր բազաժառանգի հրամանին: Փաստն այն է, որ չնայած Աբբաս Միրզայի պնդումներին ու սպասուսիրներին, Ամիր խանը, այնուամենայնիվ, ամրոց չի մտնում: Ճակատամարտի ելնելու կողմնակիցների մեջ հեղինակը նշում է նաև Աբբաս Միրզայի որդի Մուհամմադ Միրզային. որի կարծիքն էլ վճռում է պարսկական ուժերի հետագա գործողությունները¹⁵⁴:

Թեև այս ռուս-պարսկական պատերազմի խոշոր մարտերը հավաստի և հանգամանալից կերպով նկարագրված են ռուսական աղբյուրներում, սակայն, հայագրի հեղինակը որոշ մանրամասներ է ավելացնում դրանցից մի քանիսի մասին: «Թարիխ-ե Սաֆի»-ում հանգամանալից կերպով նկարագրվում է 1826թ սեպ. 3-ին Շամխոր գետի ափին¹⁵⁵, սեպ. 13-ին Գանձակի Չազալու վայրում¹⁵⁶ և 1827թ հուլիսի 5-ին Ջևանբուլաղ¹⁵⁷ վայրում տեղի ունեցած ճակատամարտերի նկարագրությունը, որտեղ հեղինակը հավաստի տվյալներ է հաղորդում պարսկական ուժերի կազմի ու կառուցվածքի, հակամարտ կողմերի հրամանատարների պահվածքի և պարսիկների պարտությանը հաջորդող խուճապահար փախուստի վերաբերյալ:

Հետաքրքրական է «Թարիխ-ե Սաֆի»-ի հիշատակությունը պարսկական բանակի կազմի մեջ մտնող ռուս դասախիբներից ու զերիններից կազմված ջոկատի և նրա հրամանատար մայոր «Մամսոն խանի»՝ Մամսոն Մյակիցեկի մասին¹⁵⁸: Դեռևս ռուս-պարսկական 1804-1813թթ. պատերազմի տարիներից պարսկական բանակում գործում էր ռուսական այդ գունդը, որը կրում էր «քահաղըրան» (богатыри բառի իրանական տարբերակը) անվանումը¹⁵⁹:

Արժեքավոր է «Թարիխ-ե Սաֆի»-ի հաղորդումը 1826թ. աշնանը գեներալ Մաղաթովի, որպես մահմեդական զավառների նահանգապետի, Շուշիի բնակչության նկատմամբ հանդես բերած հոգատարության վերաբերյալ, որը ծանր զրկանքներ էր կրել ամրոցի երկարատև

¹⁵⁰ Артамонов, ук. соч., с. 28-29, 30. А. Х. Аванесов, Бахман Мирза и его сочинение "Шукр-наме-йи шахиншахи". Автореферат на соиск. уч. ст. канд. ист. наук, Ташкент 1972, с. 28.

¹⁵¹ Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 133 բ:

¹⁵² Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 132 բ:

¹⁵³ Кавказский сборник, т. 22, Тифлис, 1901, с. 24.

¹⁵⁴ Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 134 ա-բ:

¹⁵⁵ Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 135 բ-136ա, 137 բ:

¹⁵⁶ Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 137 բ:

¹⁵⁷ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 142բ-143բ:

¹⁵⁸ Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 137ա:

¹⁵⁹ Արդ-առ-Ռազակ Գուբարի, նշվ աշխ., Թեհրան 1971, էջ 255:

պաշարման ընթացքում: Ռուսական աղբյուրների համաձայն նա «կարգադրում է բաց անել ցարական ու այլ պահեստները Շուշիի բնակչությանը պարենով ապահովելու համար, որպեսզի պաշարման օրերի տառապանքներից հետո քիչ հանգիստ առնեն»¹⁶⁰:

Այս շրջանում ոչ միայն Շուշիի այլև ամբողջ Ղարաբաղի կողոպտված բնակչությանը պարենով ապահովելը դառնում է «Մահմեդական շրջանների» նահանգապետ գեմ Մադարովի գլխավոր խնդիրը¹⁶¹:

Ղարաբաղի քոչվոր *շահսևանների*¹⁶² ու այլ ցեղերի կողմից Ղարաբաղի գյուղերի վրա կատարվող հարձակումներին վերջ տալու նպատակով 1826թ դեկ. 28-ին դեպի այնտեղ է արշավում Վ. Մադարովը: Ներսեսովը տեղեկացնում է, որ Վ. Մադարովը ցանկանում էր Մեջքին ու Ահարի շրջանները կողոպտել և այն կողմերում ավարառություններ կատարել, որպեսզի Ղարաբաղի բնակչության պարսիկների արշավանքի հետևանքով կրած ծանր վնասները քիչ փոխհատուցի: Հայազգի պատմագրի այս վկայության հավաստիությունը հաստատում է նաև այն փաստը, որ այդ արշավանքի ժամանակ ռուսական զորքը կողոպուտի է ենթարկում Ատրպատականի քոչվոր ցեղերի բնակավայրերը¹⁶³:

Ներսեսովն անդրադարձել է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի գրեթե բոլոր նշանակալի իրադարձություններին: Այս շարքում առանձնահատուկ տեղ են գրավում պատերազմի եզրափակիչ փուլում ռուսական զորքերի հաղթական մուտքը դեպի Ղարաբաղ խորքերը և դրան ուղեկցող այն ամբողջ անձ ու սարսափի նկարագրությունը, որ տիրել էր պարսիկ իշխանավորներին դրա հետևանքով¹⁶⁴:

Եզրակացություն:

Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ն Կարևոր տեղ է զբաղեցնում Ղարաբաղի XIX դարի հայ և օտար պատմագրության մեջ: Այն հարուստ է այդ ժամանակաշրջանի Ղարաբաղի պատմությանը վերաբերող հավաստի և արժեքավոր տեղեկություններով:

Ներսեսովի հաղորդումները ճշգրտումներ և լրացումներ են կատարում XVIII դարի Խամսայի մեխրությունների, Ղարաբաղի խանության և XIX դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմների քաղաքական պատմության մեջ:

Ատենախոսության քննադով հեղինակի հրապարակումները

1. Ղարաբաղի պատմության լուսաբանությունը XIX դարի պատմագրության էջերում. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատոր XVII, Երևան, 1998, էջ.55-73:
2. Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ն որպես Արցախի 18-րդ դարի պատմության սկզբնաղբյուր. Երիտասարդ արևելագետների հանրապետական 17-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1996, էջ.6-7:
3. XVIII-XIX դարերի Արցախի պատմության հիմնական սկզբնաղբյուրները. Երիտասարդ արևելագետների հանրապետական 18-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1997, էջ.17-18:
4. XIX դարի ռուս-պարսկական պատերազմների պատմությունը Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» պատմագրական երկում. Երիտասարդ արևելագետների հանրապետական 19-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 1998, էջ 14-16:

¹⁶⁰ АКАК, т. 6, ч. 2, д. 697.

¹⁶¹ Кавказский сборник, т. 26, с. 51, 102.

¹⁶² Շահ Արբաս 1-ի օրոք զանազան վայրերից որոշ ցեղախմբեր են գաղթում Ատրպատական և իրենց հայտարարում և իրենց հայտարարում շահսևաններ (քյոք շահին սիրովներ), այդ ցեղում սկզբնական շրջանում կառ 2000 վրան (տե՛ս Петрушевский, кк. соч., с.95):

Костикян Крстине Петросовна

Историкографическое сочинение Мирзы Юсуфа Нерсесова как источник по истории Карабаха XVIII-XIX вв.

диссертация на соискание ученой степени кандидата исторических наук

по специальности 7.00.05 "Историография и источниковедение"

Защита состоится 23 ноября 1999г.

Ереван-19, просп. Маршала Баграмяна 24г в Институте востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Конфликт вокруг Карабаха и нынешние проблемы относительно его статуса уходят своими корнями в глубь веков. Поэтому изучение источников истории Карабаха сегодня имеет особо важное значение для выявления исторической справедливости.

Историкографическое сочинение Мирзы Юсуфа Нерсесова "Тарих-е Сафи" (перс. Правдивая история) является одним из важнейших источников по истории Карабаха XVIII-XIX вв., которое до сих пор не издано и не известно широким научным кругам. Диссертант поставил перед собой цель изучить методом историко-сравнительного анализа ценные сведения этого произведения и ввести их в научный оборот.

Для проведения историко-сравнительного анализа сведений "Тарих-е Сафи" диссертантом привлечены сообщения русских, персоязычных и армянских источников, относящихся к истории Карабаха XVIII-XIX веков.

Одним из положительных качеств этого источника является то, что история Карабаха рассматривается не изолированно во времени, как история одного только Карабахского ханства, как она представляется в местных хрониках мусульманских авторов. Нерсесов историю Карабаха излагает в неотрывной связи с армянской государственностью, констатируя факт принадлежности его территории к числу исконно армянских областей, частичного вытеснения на протяжении веков из некоторых его регионов коренных жителей-армян кочевыми племенами. Автора интересует также судьба знаменитых княжеских родов Карабаха и он дает ценные сведения об их потомках, живущих в современное ему время.

В работе обнаружена правдивость и новизна сообщений Нерсесова, относящихся к истории армянских княжеств Карабаха (Хамсаи меликутюннер), их борьбе против ига магометанских ханов, военно-политической истории Карабахского ханства и русско-персидским войнам начала XIX века.

Благодаря своим некоторым уникальным сведениям, историографическое сочинение Нерсесова является первоклассным источником для уточнения и дополнения сведений других источников по истории Карабаха данного периода.

В частности, в сочинении содержатся важные сведения, уточняющие границы территорий подвластных армянским меликам (князям), на которых проживало в основном армянское население Карабаха. Эти данные дают четкое представление о регионах, имеющих в XVIII-XIX вв. преобладающее армянское население, которые в начале XX века были отторгнуты от территории Нагорного Карабаха и впоследствии лишены своих исконных жителей-армян.

В диссертации исследуется историческая ценность сообщений автора относительно образования магометанского ханства на территории Карабаха, внутренней и внешней политики его правителей, направленных на усиление своей власти за счет привлечения и иммиграции в свои владения кочевых племен с соседних стран. Данные, содержащиеся в "Тарих-е Сафи" о борьбе карабахских ханов против агрессии правителей соседних ханств и претендентов на престол Персии, подтверждаются не только другими источниками по истории Закавказья XVIII века, а так же дополняют их. Нерсесов дает несколько завышенную оценку политического влияния Карабахских ханов в 80-х годах XVIII века.

Диссертант исследует сведения Нерсесова о военном походе Ибрагим хана Карабахского в Хойское ханство в 1789 году и в Нахичеванское ханство в 1791г., в которых обнаруживает новые детали и уникальные данные. В диссертации рассматриваются интересные сообщения Нерсесова как очевидца военных действий, развертывающихся в Карабахе во время русско-персидской войны 1826-1828гг.

Диссертация состоит из:

1. Введения, в котором обосновывается актуальность темы, научная новизна и практическое значение. Отмечаются цель и задачи исследования, также использованные исторические источники и научная литература.

2. 4-х глав, в которых изучается жизнь и деятельность М. Ю. Нерсесова (Глава I), место его историографического сочинения в ряду местных хроник, написанных в XIXв. в Карабахе, проводится общий источниковедческий анализ сочинения (Глава II). В III-м и IV-м главах диссертации изучается историческая ценность сообщений источника по истории соответственно XVIII-х и XIX-х веков.

3. Приложения, в котором дается армянский перевод тех частей персидского текста сочинения, которые содержат ценные сведения по истории Карабаха данного периода.

KOSTIKYAN KRISTINE

"Tarikh-e Safi" of Mirza Yusuf Nersesow as a Source for the History of Karabagh of the XVIII-XIX centuries